ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2020 - 2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2021 - 2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ – 2022

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. № 4, ԿԱՅԱՑԱԾ 15.07.2022Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
_____ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) 2021-2022 ուսումնական տարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է Ակադեմիայի 2020-2024 թվականների զարգացման ռազմավարական ծրագրով (ՌԾ) սահմանված նպատակներին ու խնդիրներին համապատասխան: ՌԾ-ով սահմանված տասնմեկ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումը միտված է Ակադեմիայում ընդունելության բազմազանեցմանն ու ուսանողների կազմի ընդլայնմանը, որակյալ կրթության շարունակական բարելավման ապահովմանը, գիտական մտքի կայուն զարգացմանը, արդիական հետազոտությանն ու նորարարությանը, մարդկային ռեսուրսներին, որակյալ ենթակառուցվածքներին, ֆինանսական կայունությանն ու արդյունավետ կառավարմանը, հանրային ներգրավմանն ու ծառայություններին, միջազգայնացմանն ու համագործակցությանը, որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայրի ձևավորմանը և դաստիարակության արդյունավետ համակարգի ստեղծմանը: Նշված խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետներն ու պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և ակնկալվող արդյունքները սահմանված են ՌԾ իրականացման

ժամանակացույց-պլանով:

Սույն զեկույցում ներկայացվում է 2021-2022 ուսումնական տարում այդ խնդիրների և համապատասխան գործողությունների կատարողականը, ինչը հնարավորության կտա հստակ պատկերացում կազմել Ակադեմիայի ընթացիկ ուսումնական տարվա գործունեության արդյունքների մասին և դրանք գնահատել տարեկան կտրվածքով:

Որպես կրթական ու գիտական պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, Ակադեմիայի գործունեությունը նպատակաուղղված է քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական, հրատարակչական աշխատանքների և ուսումնառության իրականացմանը՝ բարձրագույն, միջին ու հետբուհական մասնագիտական մակարդակներում: Միաժամանակ, Ակադեմիան իրականացնում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից), ղեկավար կազմի, մասնագետների որակավորման բարձրացման՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, աղետների ռիսկի նվազեցման հիմնահարցերով (տարեկան շուրջ 2000 ունկնդիր), ինչպես նաև ԱԻՆ փրկարար ծառայության հրշեջ-փրկարարների սկզբնական պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման (տարեկան 350-400 ծառայող), բարձրությունների վրա պարանային աշխատանքների

իրականացման հարցերով՝ ՀՀ ոստիկանության և ՀՀ ԱԱԾ հատուկ նշանակության ջոկատների անձնակազմի վերապատրաստման ուղղություններով (տարեկան շուրջ 100 ծառայող):

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

2020-2024 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նպատակն է նշյալ տարիների համար ձևավորել այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը կստեղծի Ակադեմիայի կայուն զարգացման ու ժամանակակից կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ:

*Ակադեմիան սահմանում է 2020-2024 թվականների **ռազմավարական նպատակներ, դրանց** հասնելու համար ռազմավարական խնդիրներ, այդ խնդիրների լուծման համար մշակում է անհրաժեշտ միջոցառումներ և ապահովում անհրաժեշտ ռեսուրսներով:*

***Ռազմավարական խնդիրները,** դրանք ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրներն են, իսկ **իրականացման միջոցները՝** սահմանված ռազմավարական խնդիրները լուծելու համար նախատեսված ուղիներն ու անհրաժեշտ միջոցները:*

ՆՊԱՏԱԿ Ի. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Ակտիվացնել Ակադեմիայի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել մեր երկրի զարգացման կարիք-ներին, ինչպես նաև հանրության և աշխատաշուկայի պահանջներին:

Ընդունելության բազմազանեցումը և ուսանողների կազմի շարունակական ընդլայնումը համարվում է Ակադեմիայի կրթական հաստատության կարևոր նպատակներից, ինչին հասնելու համար կարևոր նշանակություն է ստանում նաև Ակադեմիայի պոտենցիալ դիմորդների հավաքագրման և մինչբուհական նախապատրաստման գործընթացների զարգացումը՝ մասնավորապես, ավագ դպրոցների և քոլեջների հետ համագործակցության ցանցի ընդլայնումը:

«Ընդունելության բազմազանեցում և ուսանողների կազմի ընդլայնում» նպատակի ***խնդիր 1.1-ով*** սահմանված է ***«Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ ներդնելով Ակադեմիայում դիմորդների ընդունելության կառավարչական, կազմակերպչական և կառուցվածքային արդյունավետ համա-կարգ, խթանելով դիմորդների հոսքի պահպանումն ու մեծա-ցումը»:***

Հաշվետու ժամանակահատվածում ևս շարունակվել են աշխատանքները ***խնդիր 1.1-ի 1-ին, 2-րդ և 3-րդ գործողություն-ների*** իրականացման ուղղությամբ, որոնցով նախատեսված է

Ակադեմիայի կայքէջը մշտապես թարմացնել, հատկապես Ակադեմիայի գործունեությունը լուսաբանող նոր նյութերով, կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր, ինչպես հիմնական այնպես էլ ավագ դպրոցների աշակերտների համար: Կատարելագործվել է դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը Ակադեմիայի և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքերում՝ հարց ու պատասխանի, դիմորդների ընդունելության կարգը կայքերում տեղադրելու միջոցով:

Նախորդ տարվա համեմատությամբ նկատելի է դիմորդների տեղաշարժ, սակայն վերջնական թվերը դեռևս հայտնի չեն, քանի որ ընդունելությունը շարունակվում է:

Խնդրի իրականացմանն ուղղված մի շարք գործողություններ կատարվել են նախորդ ժամանակահատվածներում ևս:

Շարունակվել են աշխատանքները նաև ***խնդիր 1.1-ի 4-6-րդ*** գործողությունների իրականացման ուղղությամբ, այսինքն՝ ընդլայնվել է Ակադեմիայի հետ համագործակցող ավագ դպրոցների շրջանակը (առկա է 5 հուշագիր), Ակադեմիայի ՊԴԿ-ի առավելագույնս ներգրավումը հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների ու գործնական պարապմունքների կազմակերպման գործընթացում, ինչպես նաև մշտապես կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ հանրապետության բոլոր մարզերում, ինչը նպաստում է դիմորդների հավաքագրման աշխատանքներին:

Ակադեմիայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական նյութեր են տրամադրվել շուրջ 70 դպրոցների:

Խնդիր 1.1-ի բոլոր գործողությունների իրականացումն էլ գտնվում է Ակադեմիայի կոլեկտիվի ուշադրության կենտրոնում և դրանք համարվում են անընդհատ ու շարունակական գործողություններ: Ակադեմիայի ՊԴԿ-ի կողմից իրականացվում են ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզերի շուրջ 25 հիմնական ու ավագ դպրոցներում դասընթացներ՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, աղետների ռիսկի նվազեցման, դիմակայուն և անվտանգ պետություն ունենալու, անվտանգության մշակույթ և անվտանգ միջավայր ձևավորելու հիմնահարցերով:

Համաձայն այս գործողության Երևանի և մարզերի ավելի քան 25 դպրոցների 600-ից ավելի ապագա դիմորդների համար, մասնագիտական կողմնորոշման նպատակով, կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր:

Ուսանողների հավաքագրման ևս մեկ մեխանիզմ է Ակադեմիայում վերապատրաստում անցնող ԲՈՒՀ-ի, ՄՄՈՒՀ-ի. Հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներին մեր կողմից ստեղծված ուսումնական նյութերի տրամադրումը:

Այս գործողության իրականացման շրջանակներում Ակադեմիայի հետ պայմանագրային դպրոցների քանակն ավելացել է 2-ով: Այժմ Ակադեմիան համագործակցության պայմանագրեր ունի Երևանի 5 և ՀՀ մարզերի 3 ավագ ավագ դպրոցների հետ:

1.2 խնդրի՝ «Նպաստել Ակադեմիայի ընդունելության բարձրացման կայուն հենքի ձևավորմանն, ընդլայնելով համագործակցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ» առաջին գործողության իրականացման համար, Ակադեմիայում պարբերաբար կազմակերպվում են «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր: Աշխատանքներ են տարվում ընդլայնել համագործակցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանակը և Ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտներից առավելագույնս ներգրավել բակալավրի կրթական ծրագիր: Տեղին է նշել, որ 2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրի 64 շրջանավարտից բակալավրի կրթական ծրագրի առաջին կուրսի առկա ուսուցմամբ դիմել է 6-ը, հեռակա՝ 17 և հեռակա երկրորդ կուրս՝ 18 շրջանավարտ, այսինքն շրջանավարտների շուրջ 65%-ը կրթությունը շարունակել է Ակադեմիայում, 3-ը՝ այլ ԲՈՒՀ-երում: Այլ քոլեջներից լավ և բարձր գնահատականներով 12 շրջանավարտ էլ հեռակա ուսուցմամբ ուսումը շարունակել է Ակադեմիայում:

1.3 խնդրի իրականացման նպատակով 2021/2022 ուսումնական տարում հրատարակվել են Ակադեմիայի բոլոր կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր, ինչպես նաև գունավոր բուկլետներ (1000 օրինակ տպաքանակով) և բաժանվել հանրապետության հանրակրթական հաստատություններին:

Կատարելագործվել է դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ՀՀ արտակարգ իրավիճակների և Ակադեմիայի պաշտոնական կայքերում ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ ընդունելության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունն ու կարգը կայքում տեղադրելու միջոցով:

2022-2023 ուսումնական տարվա ընդունելության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը սկսած փետրվար ամսից հրատարակվել է նաև Գեղարքունիքի մարզի համայնքային 1+1 թերթում ընդունելության ողջ ժամանակահատվածում:

Պատրաստվել են ինչպես Ակադեմիայի մասին պատմող տեսանյութեր ու ֆիլմեր, այնպես էլ առաջարկվող մասնագիտությունները գովազդող նյութեր, գունավոր բուկլետներ, ուղեցույցներ և տեղադրվել Ակադեմիայի կայքում, ֆեյսբուքյան էջում, 911 թերթում:

Ակադեմիայի ունեցած հեղինակության և կայուն գործունեության արդյունքում, ինչի մասին են փաստում շրջանավարտների կողմից նրան տրված գնահատականները, բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ շրջանավարտների շուրջ 92 %-ը բավարարված է իր ստացած կրթությունից, 95 %-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից, իսկ 90 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել Ակադեմիա:

«Կատարելագործել Ակադեմիայի ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը» 1.4 խնդրի համաձայն անընդհատ վերանայման և կատարելագործման են ենթարկվում ընդունելության ընթացակարգերն ու աշխատակարգերը: Հիշյալ ժամանակահատ-

վածում մշակվել են նաև միջին մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան կարգերը:

Խնդիր 1.5-ի ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

Առկա են համագործակցության հուշագրեր մի շարք (Կազան, Մոսկվա և այլն) առաջատար բուհերի հետ՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ, սակայն դեռևս կյանքի չեն կոչվել:

II. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակն Ակադեմիայում ստացած կրթությունից:

Վերջին տարիների ուսուցման որակի բարձրացումն ու կրթական ծրագրերի արդիականությունն առաջնահերթ կարևորություն ունեն Ակադեմիայի մասնագիտական բարձր վարկանիշի, նրա ներքին և արտաքին մրցունակության ապահովման համար:

«Որակյալ կրթության շարունակական բարելավման ապահովում» ռազմավարական նպատակի **խնդիր 2.1-ով** սահմանված է. ***«Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ»:***

2.1. խնդրի 1-3-րդ գործողությունների իրականացման համար ամբիոններում պարբերաբար վերանայվում են հայցորդի, մագիստրոսի, բակալավրի և միջին մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ), ճշգրտվում ուսումնառության վերջնարդյունքները, և կրթական ծրագրերի ցանկն համապատասխանեցվում աշխատաշուկայի պահանջներին ու ընդլայնվում ՄԿԾ-ի շրջանակը:

2020 թվականին Ակադեմիան դիմել է ՀՀ ԿԳՄՍ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» հրամանի հավելված 2-ի ցանկում (մագիստրոսի կրթական ծրագիր) «Իրավագիտություն» բաժնում լրացնել նոր՝ (Ճգնաժամային իրավունք)» տողով: Առաջարկությունն ընդունվել է և «042101.00.7 Իրավագիտություն» մասնագիտության սյունակը լրացվել՝ «042101.16.7 (Ճգնաժամային իրավունք)»-ով և Ակադեմիային ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից տրամադրվել գործունեության իրականացման լիցենզիա, ինչն իրականացվում է սկսած 2020-2021 ուսումնական տարվանից:

Միաժամանակ, 2020 թվականին Ակադեմիան ՀՀ ԲՈԿ է ներկայացրել հիմնավորում «Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկ»-ում արտակարգ իրավիճակների նախարարության ոլորտային մասնագիտություններով լրացնելու մասին, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների միջազգային իրավունք և ճգնաժամային իրավունք:

ԲՈԿ-ի իրավաբանական գիտությունների մասնագիտական խումբը կայացրել է որոշում, համաձայն որի հնարավոր է կազմավորել մեկանգամյա պաշտպանության մասնագիտական խորհրդի կազմ՝ մասնագետների միջգիտաճյուղային ընդգրկումով, անհրաժեշտության դեպքում պաշտպանության գործընթացում ներգրավելով քաղաքագետներ:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի առաջարկությամբ ՀՀ ԿԳՄՍՆ ՄԿՈՒԶԱԽԻ հետ համատեղ միջին մասնա-

գիտական (արհեստագործական) կրթական ծրագրի համար մշակվել և ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատվել է 2 նոր մասնագիտություն:

Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և միջին մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի համար մշակման փուլում է ևս 2 նոր մասնագիտություն, որոնք նույնպես կհամալրեն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի թիվ 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի ցանկը:

2.1. խնդրի 4-րդ գործողության իրականացման համար 2022-ին Ակադեմիան դիմել է ԿԳՄՍՆ-ը հենակետային հիմնական դպրոցի գործունեության թույլտվության համար, ինչն ակնկալում է դպրոցում «Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի ստեղծում քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և անվտանգության մշակույթի ձևավորման ու զարգացման ուղղությամբ: Ակադեմիայի մասնագետների կողմից մշակվել է «Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի հայեցակարգը և հիմնական գաղափարները, ինչպես նաև 2-րդ և 3-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկները, որոնք որպես ուսումնական նյութ երաշխավորվել են ԿԳՄՍՆ կողմից: Մշակման փուլում են 4-9-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկները:

Հիշյալ ***խնդրի 5-րդ*** գործողությունը մշտապես գտնվում է բարելավման ու բարենպաստ պայմանների ստեղծման փուլում:

2.1 խնդրի 6-րդ գործողության շրջանակում՝ Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 606-Ն «Հայաստանի փրկարար ծառայության ուսումնական հաստատությունում ուսման կանոնագիրքը հաստատելու մասին» որոշման 19-րդ կետի, Ակադեմիայի բոլոր կրթական ծրագրով սովորողների ուսումնական, արտադրական, հետազոտական և նախաավարտական պրակտիկաներն իրականացվում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժանումներում՝ ճգնաժամային կառավարման կենտրոնում (ՃԿԿ), Հրշեջ փրկարարական ջոկատներում (ՀՓՋ) և Դավիթաշենի ՀՀՋ-ում, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի լաբորատորիաներում, հատկապես՝ ԱԹՍ-ի և IT համալիր լաբորատորիայում, Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող «Լուսակերտ» ուսումնական կենտրոնում, (գնացքի վթարներ, ուղղաթիռի վթար, պարանային աշխատանքներ աշտարակների վրա, ավտովթար, խոչընդոտների հաղթահարում և այլն) և Ստեփանավան քաղաքի մասնագիտական ԱԹՍ-ի լաբորատորիայում և ԱԹՍ վարժանքների վարժահրապարակներում, որոնողափրկարարական աշխատանքների կատարման ուղղությամբ՝ «Լուսակերտ» ուսումնական կենտրոնում, Ստեփանավան քաղաքի վարժահրապարակներում, Հրազդանի ձորում, օպերատիվ կառավարման ուղղությամբ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում ու 911 ծառայությունում և տեխնիկական ուսուցման ուղղությամբ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հատուկ փրկարա-

ական ջոկատում, հատուկ հրշեջ փրկարարական ջոկատում, վարժահրապարակներում և այլն:

Վերոհիշյալ ***խնդրի 7 և 8-րդ*** գործողությունների իրականացման համար Ակադեմիայի մասնագետների կողմից մշակվել է հեռավար ուսուցման էլեկտրոնային ռեսուրսների ձևավորման ղեկավար ձեռնարկ և համակարգից օգտվելու ուղեցույց:

Ակադեմիայում դեռևս 2018 թվականից սկսած տարվել են աշխատանքներ կրթական գործընթացում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

Նախատեսվում է դասընթացների դասախոսությունների նյութերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ու դասընթացին օժանդակող նյութերի տեղադրման շարունակական տեղադրում և թարմացում:

Խնդրի իրականացմանն ուղղված ***8-րդ*** գործողության՝ ***«Իրականացնել ՊԴԿ-ի վերապատրաստման աշխատանքներ հեռավար ուսուցման ներդրման նպատակով»*** կատարմանն ուղղված և պայմանավորված COVID-19 համավարակով, 2020 թվականի մարտից սկսած Ակադեմիան սահուն և առանց խոչընդոտների անցել է հեռավար (Ակադեմիայի առցանց հարթակի միջոցով) ուսուցման:

Ակադեմիայի պաշտոնական www.cmsa.am կայք էջում բացված edu.cmsa.am հարթակը ծառայում է հեռավար կրթություն կազմակերպելու նպատակով, որտեղ տեղադրված են դասավանդվող դասընթացների դասախոսությունների (quiz), պիտակի (label), պա-

շարի (resources), ինտերակտիվ տեսանյութերի ու սահիկների ներառմամբ էլեկտրոնային տարբերակները:

Այս խնդրի առնչությամբ իրականացվել է զգալի աշխատանք, աշխատանքները շարունակվում են և նախատեսված է վերապատրաստել ևս 30 դասախոս:

Խնդիր 2.2. «Ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև Ակադեմիայի կողմից նոր կրթական ծրագրերի մշակման մեխանիզմներ»:

Խնդրի իրականացմանն ուղղված մի շարք գործողություններ կատարվել են նախորդ ժամանակահատվածներում և շարունակվում են աշխատանքները կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման, կրեդիտային համակարգի բարելավման, ինչպես նաև նոր կրթական ծրագրերի ներդրման ուղղություններով:

Տեղին է նշել, որ 2020-2021 ուսումնական տարում մշակվել և հաստատվել է մագիստրոսական նոր կրթական ծրագիր առկա ուսուցմամբ՝ «Իրավագիտություն (Ճգնաժամային իրավունք)», որը ներդրվել է վերոգրյալ ուսումնական տարում և ունեցել ենք 7 դիմորդ:

2021 թվականին մշակվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատվել է միջին մասնագիտական երկու նոր կրթական ծրագիր, հիմնական ընդհանուր կրթության հիմքով, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի թիվ 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի

Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համապատասխան.

1. Հեռակառավարվող սարքերը որոնողափրկարարական աշխատանքներում «Տեխնիկ - օպերատոր՝ որոնողափրկարարական աշխատանքներում հեռակառավարվող սարքերի շահագործման» որակավորմամբ:
2. «Պաշտպանական կառույցների շահագործում» մասնագիտությամբ՝ «Մասնագետ՝ պաշտպանական կառույցների շահագործման» որակավորմամբ:

Վերոգրյալ երկու մասնագիտությունների համար մշակվել է որակավորման պետական կրթական չափորոշիչները և ուսումնական պլաններն ու մոդուլային ծրագրերը:

ՀՀ Կառավարության որոշմամբ Ակադեմիային 2022-2023 ուսումնական տարվա համար տրամադրվել է 120 անվճար տեղ, որից 30-ը՝ «Հեռակառավարվող սարքերը որոնողափրկարարական աշխատանքներում» մասնագիտության համար:

2022 թվականին Ակադեմիան շարունակում է հիմնական ընդհանուր կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրի համար մշակել ևս երկու նոր մասնագիտություն.

1. «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ավտոմատացված կառավարման համակարգեր» մասնագիտություն՝ «Տեխնիկ՝ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ավտոմատացված կառավարման համակարգերի սարքերի ու սարքավորումների սպասարկման» որակավորմամբ:

2. «Կապ և ազդարարում բնակչության պաշտպանության ոլորտում» մասնագիտություն՝ «Տեխնիկ՝ բնակչության պաշտպանության ոլորտում կապի և ազդարարման» որակավորմամբ:

«Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները» 2.3 խնդրի «Զարգացնել ՊԴԿ-ի առաջավոր փորձի տարածման և խրախուսման մեխանիզմները, խրախուսել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումը» գործողության իրագործման նպատակով, բացի նրանից, որ տարբեր ուղղություններով վերապատրաստվել է Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմը և այլ աշխատակիցներ, վերապատրաստում են նաև Ակադեմիայի դասախոսները: Օրինակ՝ Համաձայն ԱԻ նախարարի հանձնարարականի մշակվել է ԱԹՍ-ների հետ կապված ուսուցման ծրագիր երեք փուլով. «Լուսակերտ» ուսումնական բազայում Ակադեմիան իրականացրել է «Անօդաչու թռչող սարքերի շահագործում» թեմայով դասընթաց Երևան քաղաքի, 8 մարզերի փրկարար ծառայողների, ինչպես նաև Ստեփանավան քաղաքում ԱԻՆ ՄՓՎ և ՀՆՓԱԻԿ փրկարարական ծառայողների համար քառօրյա դասընթաց:

«Իրականացնել ՊԴԿ-ի որակավորման բարձրացման մասնագիտական, մանկավարժական և մեթոդական վերապատրաստումներ» ***6-րդ*** գործողության առնչությամբ իրականացվել է զգալի աշխատանք, մասնավորապես՝

✓ Ակադեմիայի 10 դասախոս վերապատրաստվել է ՌԴ ԱԻՆ ՔՊ ակադեմիայի կողմից և ստացել դիպլոմներ:

- ✓ ERASMUS+ շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմից վերապատրաստվել է շուրջ 11 դասախոս տարբեր նորարարական մեթոդների ուղղություններով:
- ✓ 2022թ.-ի փետրվարի 21-25 38 հոգի 5-օրյա վերապատրաստում է անցել մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներ թեմայով:
- ✓ 2022թ.-ի ապրիլի 18-20 մեկ մասնագետ մասնակցել է ՀՀ մասնագիտական կողմնորոշման կարողությունների զարգացման կենտրոնի կողմից իրականացված «Կարիերայի կառավարման աշխատանքները ՄԿՈՒ հաստատություններում» թեմայով 40 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստմանը:

Նախատեսված է ընթացիկ ուսումնական տարում վերապատրաստել ևս 15 դասախոսի:

Շարունակվում են աշխատանքներն այս խնդրի բարելավման ուղղությամբ և վերանայվել ու գիտական խորհրդի կողմից հաստատվել է՝ «Դասավանդման, ուսումնառության մեթոդների ընտրության և գնահատման ու մշտադիտարկման քաղաքականությունը» (*Գիտական խորհրդի նիստի No 2 արձանագրություն, 15.04.2022թ.):*

Խնդիր 2.3-ի 8-րդ գործողության առնչությամբ ***«Վերանայել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմը գրագողությունը կանխելու նպատակով»՝*** գործողության կատարմանն ուղղված գրագողությունը հայտնաբերելու նպատակով կիրառվում են տարբեր մեթոդներ՝ գրագողության դեպքում մագիստրոսի կրթական ծրագրի թեզը (ավարտական աշխատանքը) չի թույլատրվում պաշտ-

պանության, իսկ հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:

Հիշյալ գործողության լավացման նպատակով վերանայվել ու գիտական խորհրդի կողմից (*Գիտական խորհրդի նիստի No 2 արձանագրություն, 15.04.2022թ.)* հաստատվել է «Ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմը գրագողության կանխարգելման և պատասխանատվության ենթարկման կանոնակարգ»-ը:

Խնդիր 2.4. «***Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում***»***:***

Խնդրի իրականացման նպատակով Ակադեմիայի մասնագետների կողմից մշակված համապատասխան ձեռնարկն ու համակարգից օգտվելու ուղեցույցը բաշխվել է պրոֆեսորադասախոսական կազմին և պարբերաբար իրականացվել վերապատրաստման դասընթացներ: Էլեկտրոնային ուսուցման տեխնիկական միջոցների սպասարկման և ծրագրային միջոցների զարգացման ուղղությամբ վերապատրաստվել է շուրջ 80 դասախոս:

Ակադեմիայում 2018 թվականից սկսած ձևավորել է անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ու ներդրման համար, տարվել են աշխատանքներ կրթական գործընթացում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Պրոֆեսորադասախոսական կազմը միաժամանակ ապահովել է կապը հետազոտության և դասավանդման միջև,

ինչպես նաև հետազոտության արդյունքները կիրառվում են ուսումնական գործընթացում: Ակադեմիայի էլեկտրոնային հարթակում առկա են ուսումնառության հիմնական և լրացուցիչ (դասախոսությունների և առաջադրանքի նյութեր, տեսաֆիլմեր, քարտեզներ, իրավիճակային խնդիրներ, մասնագիտական ֆիլմեր և այլն) էլեկտրոնային ռեսուրսները յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում: Ակադեմիայի էլեկտրոնային հարթակում տեղադրված է շուրջ 100 դասընթաց:

Ամփոփելով 2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայի իրականացրած կրթական գործունեությունը պետք է նշել, որ ընդհանուր առմամբ այն եղել է արդյունավետ, հաջողությամբ իրականացվել են նախատեսված շատ գործընթացներ և արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ: Սակայն, եղել են նաև որոշակի բացթողումներ ու թերացումներ: Մասնավորապես՝ որակի ապահովման որոշ գործընթացներում նկատելի է ամբիոնների թույլ ներգրավվածություն ֆակուլտետի աշխատանքներում:

ՆՊԱՏԱԿ III. ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Ակադեմիայի առաքելությունը, գիտական մտքի կայուն զարգացումը, արդիական հետազոտությունն ու նորարարությունը առաջիկա տարիներին պետք է դառնա Ակադեմիայի ռազմավարական նպատակ:

Ակադեմիայի համար կարևոր է արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի զարգացմանն ուղղված ակտիվ գործունեությունը և այդ ուղղությամբ կոնկրետ միջոցառումների իրականացումը: Ակադեմիան վերոնշյալ խնդիրը, որպես ռազմավարական նպատակ, դիտարկել է ինչպես հետազոտական մշակույթի ներդրման ու տարածման, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական հմտությունների զարգացման, ուսումնական գործընթացում նրանց կողմից հետազոտությունների իրականացման ներդրման տեսակետից:

Ակադեմիայի 2020-2024 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում հստակ նշված է, որ Ակադեմիայի հետազոտությունների և միջազգային համագործակցության դերի բարձրացման նպատակով կընդլայնվի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, կնպաստի ակադեմիական համագործակցության ընդլայմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Արդյունքում, Ակադեմիան նպատակ ունի դառնալ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող առավել ակտիվ մասնակից և իր գործունեությամբ նպաստել Հայաստանի կրթական, գիտական, սոցիալական և տնտեսական տարածքների մերձեցմանը Եվրոպայի և Ասիայի կրթության համակարգերին:

«***Գիտական մտքի կայուն զարգացում, արդիական հետազոտություն և նորարարություն***» նպատակի ***Խնդիր 3.1***-ով սահմանված է. ***«Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնմանը»:***

2019 թվականին ՀՀ բարձագույն որակավորման կոմիտեն թույլատրել է ակադեմիային հաստատելու ատենախոսության թեմա «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ: Այսօրվա դրությամբ հիշյալ մասնագիտությամբ առկա է երկու հայցորդ:

2022 թվականին առաջին անգամ Ակադեմիայի դասախոսներից մեկը պաշտպանվեց թեկնածուական ատենախոսություն արտակարգ իրավիճակներում անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման ուղղությամբ, շնորհվեց գիտական աստիճան ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ դոցենտի գիտական կոչում շնորհվեց 2 գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող դասախոսի, ինչը հաստատվեց ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից:

Ակադեմիայում շարունակական բնույթ է կրում Հանրապետության տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտաշխատողներին որպես մագիստրանտների և հայցորդների հետազոտական աշխատանքների ղեկավարի ներգրավումը: 5-րդ գործողությամբ առաջարկված խրախուսման գործընթացներն իրականացվում են, հաշվի առնելով, որ ուսանողական գիտական ընկերության շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքները՝ որպես հոդված հրատարակվում են, իսկ ուսանողներին տրամադրվում է հանդեսի մեկ օրինակ և մասնակցության հավաստագիր:

2022թ. մարտի 1-ին՝ Ակադեմիայում «Քաղաքացիական պաշտպանության» միջազգային օրվան նվիրված անցկացվեց «Քաղաքացիական պաշտպանության արդի մարտահրավերները» խորագրով հանրապետական երիտասարդական գիտաժողով, որին մասնակցեց ոչ միայն Ակադեմիայի, այլև Երևանի պետական, Հայաստանի պետական մանկավարժական, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարաններից ուսանողներ: Ներկայացվեց 13 զեկույց:

Վերոգրյալ գիտաժողովին զուգահեռ Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմն առցանց ձևաչափով մասնակցեց ևս մեկ՝ Ռուսաստանի քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարության Քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի «Կանխարգելում, փրկություն, օգնություն» միջազգային գիտագործնական 12-րդ գիտաժողովին:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի դասախոսները և հայցորդները մասնակցել են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Հայբուսակ համալսարանի, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի, Ա. Խանփերյանցի անվան ավիացիայի ինստիտուտի գիտաժողովներներին (12 մասնակից): Վերջին երկուսում մասնակցել են նաև ուսանողներ (2 մագիստրոս):

Երևանի պետական համալսարանում անցկացվել է «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովի հատուկ նստաշրջան՝ նվիրված հետպատերազմյան հոգեբանական աջակցության հիմնախնդիրներին:

Գիտական հավաքին մասնակցել են նաև Ակադեմիայի մագիստրոսի կրթական ծրագրի «Հոգեբանություն» մասնագիտության հինգ ուսանողներ: Նրանք ներկայացրել են «Փրկարարների հոգեբանական պատրաստվածության կարևորությունը և սոցիալ-հոգեբանական աջակցությունը պատերազմի ժամանակ» թեմայով զեկույց:

Համաձայն ***Խնդիր 3.1-ի 6-րդ*** գործողության՝ «***Վերանայել հետազոտական բաղադրիչի իրականացումը մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերում»*** իրականացվում է պարբերաբար: Հետազոտական բաղադրիչի առկայություն հատկապես նկատվում է մագիստրոսական թեզերում:

Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ սահմանված է. ***«Ստեղծել անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) լաբորատորիա»:***

2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայում ձևավորվել է IT համալիր-լաբորատորիա: Լաբորատորիայում առկա են՝ փլատակ-

ներում և այլ վտանգավոր անանցանելի տեղանքներում որոնողա-կան և հետախուզական աշխատանք իրականացնող սարքավո-րումներ, իրազեկման, ազդարարման, փրկարարական աշխատանք-ներ կատարելու և առաջին օգնության անհրաժեշտ պարագաներ տեղափոխելու համար նախատեսված անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ): IT լաբորատորիայի նոր ձեռքբերումներից է գերճշգրիտ քարտեզագրման սարքը, ինչը տուժածի կոորդինատները որոշում է առավելագույնը 2 միլիմետր սխալանքով:

3-րդ նպատակի ***3.1 խնդրի 8-րդ՝ «Իրականացնել գիտա-հետազոտական աշխատանքներ վտանգների (սողանք, սելավ, քարաթափում, ձնահյուսք և այլն) ռիսկերի և խոցելիության գնա-հատման, կանխարգելման, դիմակայման, ինչպես նաև արտա-կարգ իրավիճակներում արձագանքման (ազդարարման, ոչ մատ-չելի վայրերում գիշերային լուսավորման) գործընթացներում ԱԹՍ-երի կիրառման հնարավորությունների ուսումնասիրման և նորարարական հետազոտությունների խթանման նպատակով»*** գործողության վերաբերյալ կարելի է ասել, որ Ակադեմիայի հետա-զոտական նպատակներից է ուսումնասիրել որոնողափրկարարա-կան աշխատանքներում անօդաչու թռչող սարքերի կիրառման առանձնահատկությունները, մշակվել է նաև ծրագիր, որի օգնու-թյամբ ԱԹՍ-ն, ըստ ջրում գտնվողի շարժումների, «հասկանում է» վիճակը՝ խեղդվում է՞, թե ո՞չ, և ցուցաբերում է օգնություն: Սխալները բացառելու համար, ԱԹՍ-ն նախ կապ է հաստատում օպերատորի հետ և հաղորդում տեսանյութ, ըստ որի էլ փրկարարները կայացնում են որոշում:

Անօդաչու թռչող սարքի կիրառությամբ իրականացվել են որոնողափրկարարական գիտափորձնական աշխատանքներ Ապարանում, Հրազդանի կիրճում, Արզնու ձորում (հիմնական խնդիրն էր քարտեզագրման հնարավորությունների ուսումնասիրումը) և Ստեփանավանում (գետային խոչընդոտներ հաղթահարելու գործում գրանցել դրական արդյունքներ):

Իրականացվել են նաև ջրափրկարարական գիտահետազոտական աշխատանքներ ԱԹՍ-ների կիրառմամբ Սևանա լճի տարածքում, ինչպես նաև՝ մշտադիտարկում, լողափում վարքականոնների ուղղությամբ իրազեկում, դրանք խախտողներին զգուշացում, ջերմային պատկերիչով տուժածի հայտնաբերում, կոորդինատների որոշում և հաղորդում փրկարարաներին ու օպերատիվ շտաբ և փրկօղակի նետում ջրում գտնվող տուժածին:

ԱԹՍ-ի կիրառմամբ հանգստյան օրերին իրականացվել է ազդարարում Սևանա լճին հարակից հանրային ափերում անվտանգության վարքականոնների վերաբերյալ՝ 5 թռիչք, յուրաքանչյուրը 30-ից 40 րոպե տևողությամբ, բացառությամբ այն օրերի, երբ եղանակային վատ պայմանները թույլ չեն տվել իրականացնել նախատեսված ազդարարումը:

ԱԹՍ-ի միջոցով անտառային հրդեհներից խուսափելու համար վարքականոնների վերաբերյալ Ակադեմիայի աշխատակիցների կողմից իրազեկում է իրականացվել Լոռու, Տավուշի մարզերում՝ Դիլիջանի Հաղարծին վանքի մերձակա հանգստյան գոտիներում (թռիչքի տևողությունը 25 րոպե), Ստեփանավանի Լոռէ փրկարարական ջոկատի մերձակա հանգստյան գոտիներում, Դենդրոպարկում և

հարակից տարածքներում (թռիչքի տևողությունը 25 րոպե), Վեդիում՝ Խոսրովի արգելոցի մերձակա հանգստյան գոտիներում (20 կմ երկարությամբ), Հրազդան-Հանքավան ճանապարհին՝ Մեղրաձորի հարակից հանգստյան գոտիներում (1 թռիչք մոտ 30 րոպե տևողությամբ), ինչպես նաև Ջերմուկ քաղաքի նախկին ձկնաբուծարանի ճանապարհի և Կեչուտի ջրամբարի մերձակա հանգստյան գոտիներում (2 թռիչք):

IT լաբորատորիայում մշակվել է փոքր ռոբոտի անցողունակությունը բարձրացնող մետաղական կոնստրուկցիաներ, ինչը հնարավորություն է տվել ռոբոտը իջեցնելու և վեր բարձրացնելու 650 թեքություն ունեցող աստիճանավանդակով, իրականացվել են ԱԹՍ-ների միջոցով ջրային խոչընդոտների հաղթահարման, ինչպես նաև պարանների ամրացման մեխանիզմների մշակման աշխատանքներ, կատարվել են ԱԹՍ-ի միջոցով 65 սմ լայնությամբ պատուհանից շենքի 5-րդ հարկ մուտք գործելու և ներսում աշխատանքներ իրականացնելու գիտափորձեր իրականացվել է ուսանողական ուսումնավարժանք, որի ժամանակ շահագործվել են ԱԹՍ-ն՝ փակ տարածքում և փոքր անիվավոր ռոբոտի անցողունակության բարձրացման համար մշակված մետաղական կոնստրուկցիաները, իրականացվել են ունիվերսալ միկրոսխեմաների ուսումնասիրություններ և ծրագրավորման փորձեր, նախագծման փուլում է գտնվում ԱԹՍ-Ռոբոտ ունիվերսալ սարքի ստեղծումը, ինչն իրենից ներկայացնում է ԱԹՍ, որն ունի հնարավորություն քայլել պատի վրայով, իրականացվում են վերլուծական աշխատանքներ ԱԹՍ–ներից ստացված պատկերների և տեսաֆիլմերի հիման վրա:

Տեղին է փաստել, որ Ակադեմիան ՄԿՈՒՀԱԽ-ի հետ համատեղ դեռևս 2021 թվականին մշակեց «Հեռակառավարվող սարքերը որոնողափրկարարական աշխատանքներում» միջին մասնագիտական կրթական ծրագիրը (2022 թվականին այն ներդրվեց), նպատակ ունենալով որոնողափրկարարական աշխատանքներում հեռակառավարվող սարքերի կիրառման լայնածավալ աշխատանքային ոլորտները բնակչության պաշտպանության ուղղությամբ:

Այս ***խնդրի 9-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Կազմակերպել միջազգային գիտաժողովներ, ընդգրկելով առավել մեծ թվով գիտնականների, նվիրված ոլորտի առաջնահերթ հիմնախնդիրներին»:***

Ակադեմիան միջոցներ է ձեռնարկում (հնարավորության սահմաններում) ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր ստեղծելու ուղղությամբ, պարբերաբար թարմացնելով լաբորատորիաները նոր սարք-սարքավորումներով, գրադարանային ռեսուրսները՝ նոր գրականությամբ և այլն:

3.1 խնդրի 10-11 գործողությունների ուղղությամբ աշխատանքները շարունակական են, իսկ ուսումնավարժանքներն իրականացվում եմ մշտապես դասախոսական կազմի ղեկավարությամբ, անվտանգության ապահովմամբ և ուսանողների մասնակցությամբ: Յուրաքանչյուր միջազգային ուսումնավարժանքի տևողությունը 36 ժամ է, որին մասնակցում է շուրջ 15 դասախոս և 20-25 ուսանող:

Ակադեմիայում կան բոլոր պայմանները որակյալ կրթություն, գործնական աշխատանքներ և ուսումնավարժանքներ կազմակերպելու համար:

«Անմիջական կապ հաստատել արտակարգ իրավիճակների ոլորտային միջազգային կրթական և գիտական կազմակերպությունների հետ» 12-րդ գործողության իրականացման համար 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Համագործակցության հուշագիր է վերակնքվել.

- Կազանի Ա.Ն. Տուպոլևի անվան ազգային հետազոտական տեխնիկական համալսարանի հետ:

2021 թվականի դեկտեմբերի 28-ին երկու Համագործակցության հուշագիր է կնքվել Ակադեմիայի և

1. Արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման «R5» կենտրոնի,
2. «Լայթ լայն» ընկերության հետ:

Մնացած գործողությունների իրականացման ուղղությամբ նույնպես տարվում են մշտական աշխատանքներ:

«Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» հոդվածների գիտական հանդեսը հրատարակվում է 2010 թվականից և ընդգրկված է ԲՈԿ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում: Առ այսօր հրատարակվել է 20 համար, ընդհանուր քանակով՝ 553 հոդված, որի շուրջ 60 %-ը՝ Ակադեմիայի ՊԴԿ-ի կողմից: Ժողովածուն լայն ճանաչում է գտել ոչ միայն մեր հանրապետությունում, այլև արտերկրում: Դրա վառ ապացույցն է հանդեսի տարբեր համարներում հրատարակված օտարերկրյա գործընկերների հոդվածները Ճապոնիայից, ԱՄՆ-ից, ՌԴ-ից (Սանկտ Պետերբուրգ), Լեհաստանի, Ղրղզստանի, ՈՒկրաի-

նայի և Վրաստանի Հանրապետություններից: Հոդվածներ են ներկայացրել նաև ԵՊՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՀԱԱՀ-ի, ԲՊՀ-ի, ԵՊԼՀ-ի, Գորիսի և Գյումրու մանկավարժական համալսարանների, ՖԿՀՊԻ-ի ՊԴԿ-ն, ԱԻՆ ստորաբաժանումների, հանրապետության տարբեր կազմակերպությունների, քաղաքացիական և հասարակական կառույցների ներկայացուցիչներ և այլն:

Հանդեսն ապահովում է Ակադեմիայի, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի, տեղական և օտարերկրյա գործընկերների կողմից իրականացված գիտական ու գիտամեթոդական աշխատանքների հրապարակայնությունը և նպաստում է տարածաշրջանում գիտական մտքի զարգացմանը քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ գիտական հանդեսի 2 համար՝ հոդվածների ընդհանուր թիվը 49-ը:

Մշակվել են և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատվել են միջին մասնագիտական կրթական ծրագրով երկու՝ «Հեռակառավարվող սարքերը որոնողափրկարարական աշխատանքներում» և «Պաշտպանական կառույցների շահագործում» մասնագիտությունների գծով որակավորման պետական կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը:

Տրվել են կարծիքներ 10 գիտական աշխատանքների վերաբերյալ, այդ թվում նաև ատենախոսությունների և սեղմագրերի:

Ներկայացվել են շուրջ 25 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում (առցանց):

Ղեկավարվել է 62 մագիստրոսական թեզ:

Խնդիր 3.2-ով սահմանված է ***«Խորացնել հետազոտական համագործակցությունը մի շարք գիտահետազոտական կենտրոնների, բուհերի և կազմակերպությունների հետ»:***

Խնդրի 1-ին գործողության վերաբերյալ կարելի է նշել, որ Ակադեմիայում ստեղծված են համապատասխան պայմաններ գիտաժողովների, թեմատիկ դասընթացների և այլ միջոցառումների կազմակերպման առումով: 2020 թվականից սկսած համագործակցության զգալի մասն իրականացվում է առցանց:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել գիտական և տեխնիկական համագործակցությունը ՀՀ և օտարերկրյա ԲՈՒՀ-երի ու գիտական կենտրոնների հետ»:***

Հանրապետության տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտաշխատողներին և ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմին որպես հետազոտական աշխատանքների ղեկավար ներգրավելը կրում է կայուն շարունակական բնույթ:

Այս գործողության իրականացմանը միտված հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում ներգրավված են հանրապետության շուրջ 20 առաջատար գիտաշխատողներ ՀՀ և օտարերկրյա ԲՈՒՀ-երից ու գիտական կենտրոններից:

3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Աջակցել գիտահե-***

փազոտական կենտրոնների հետ ոլորտի զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացմանը, ներգրավելով Ակադեմիայի հետազոտողների»:

Կենտրոնական Ասիայում և Կովկասում կենսաանվտանգության ասոցացիա ծրագրի շրջանակներում 2021 թվականի նոյեմբերի 1-ից մեկնարկել է «COVID 19-ից քաղած դասերը» համագործակցությունը ճգնաժամային ծառայողների և իրավապահ մարմինների համար: Այն իրականացվում է միջազգային գիտությունների և տեխնոլոգիաների կենտրոնի կողմից, նպատակն է՝ Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Արևմտյան Եվրոպայի փորձագետների հետ քննարկել համաճարակից քաղած դասերը, որոնք մարտահրավեր են եղել: Ակադեմիան ունի մեկ մասնակից:

Հաջորդ ծրագիրը, դա Ակադեմիայի կողմից իրականացվող համատեղ ծրագրերն են գիտահետազոտական կենտրոնների հետ՝ տարբեր ոլորտներում: Այդ մասին է վկայում «Համայնքահեն խելացի քաղաք թվային երկվորյակ հարթակ՝ օպտիմալացված ԱՌԿ գործողություններ և համայնքների աղետների դիմակայունության հզորացում (PANTHEONs)» ծրագիրը, որի նպատակն է նախագծել և զարգացնել համայնքահեն աղետների դիմակայման թվային հարթակ՝ օգտագործելով խելացի քաղաք թվային երկվորյակ հարթակ (SCDT-Smarth City Digital Twin) տեխնոլոգիան, ինչը հնարավորություն կտա բարելավել ռիսկերի գնահատումը, նվազեցնել խոցելիությունը և ձևավորել դիմակայուն համայնքներ: Ծրագիրը 3 տարով է և ֆինանսավորում է Եվրոմիության կողմից: Ծրագրին մասնակցում է 17 երկիր, այդ թվում՝ Հայաստան, Բելգիա, Հունաստան, Ավստրիա,

Իսպանիա, Մալթա և այլն: ***Հայաստանի բյուջեն՝*** 62.500 եվրո: Ծրագրին մասնակցում է Ակադեմիայից աշխատանքային խումբ՝ չորս աշխատակցով:

4-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների մասնակցությամբ նախաձեռնել ոլորտային կարիքներին համապատասխան համատեղ հետազոտական ծրագրեր»:***

2021 թվականի մայիսին Սևանա լճի թերակղզու հատվածում անցկացվել է «Որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը Սևանա լճում» ուսումնավարժություն, որին, մասնակցում էին Գեղարքունիքի ջրափրկարարները, ԱԻՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի ջրասուզակները, փրկարար ծառայության բժշկական ապահովման վարչության, հոգեբանական աջակցության բաժնի ծառայողները, Ակադեմիայի անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ) որոնողափրկարարական աշխատանքներում կիրառելու խնդիրներով զբաղվող գիտահետազոտական խումբը՝ ընդհանուր թվով 53 հոգի: Ուսումնավարժության նպատակն էր Սևանա լճում հանգստի և լողասեզոնի մեկնարկից առաջ ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը, բարձրացնել փրկարարական ստորաբաժանումների անձնակազմի գործնական հմտությունները ջրափրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Վարժանքի սցենարը կառուցված էր ԱԹՍ-ների օգտագործման վրա: Այսինքն, ԱԹՍ-ն օգտագործվում են Սևանում հանգստացող-

ների ազդարարման, իրազեկման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ որոնողափրկարարական աշխատանքներում:

Ամփոփելով ուսումնավարժության արդյունքները, արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետները փաստեցին, որ ուսումնավարժությունը ծառայեց նպատակին՝ ԱԹՍ-ների կիրառումը ազդարարման, իրազեկման որոնողափրկարարական աշխատանքներում արդարացված է, ԱԹՍ-ով կարելի է մեծ տարածքներ վերահսկել: Այսինքն Ակադեմիայի կողմից իրականացվում է արտակարգ իրավիճակների նախարարության ոլորտային կարիքներին համապատասխան հետազոտական ծրագրեր և դրանք կիրառվում նախարարության կարիքների համար:

2021 թվականին ամբողջ ամառվա ընթացքում Ակադեմիայի գիտահետազոտական խումբը գիտափորձնական աշխատանքներ է կատարել Սևանա լճում հանգստի ակտիվ շրջանում ԱԹՍ-ներով անվտանգության կանոնների պահպանման հանրային իրազեկում է կազմակերպել Սևանա լճի լողափներում:

Հանրային իրազեկման աշխատանքներ իրականացնող գիտահետազոտական խումբը ԱԹՍ-ն փորձարկել է նաև Լոռու մարզի անտառամերձ հանգստյան գոտիներում:

Ակադեմիայի մասնագետների կողմից իրազեկումն իրականացվել է համապատասխանաբար Սևանա լճում՝ ջրում անվտանգության կանոնների, իսկ Լոռու մարզի դեպքում՝ անտառում կրակ վառելու անվտանգության կանոնների վերաբերյալ:

Ակադեմիայի մասնագետները ԱԻՆ մարզային փրկարար վարչությունների ծառայողների հետ իրականացրել են ուսուցում և

հենց տեղերում՝ գործնական պարապմունքներ:

«Ավելացնել հետազոտության խթանմանն ուղղված ֆինանսական ռեսուրսները» 5-րդ գործողությամբ նախատեսված ֆինանսական ռեսուրսները տրամադրված են համապատասխան հետազոտական աշխատանքների կատարման համար:

Ֆինանսների չափը.

2021 թվականին նկատելի ձևով աճել է հետազոտությանը հատկացվող ֆինանսական ռեսուրսները և այն կազմել է ***25.193.462 ՀՀ դրամ:***

Անվանումը	***2020 թ. (ՀՀ դրամ)***	***2021 թ. (ՀՀ դրամ)***
Գիտահետազոտական կենտրոնի աշխատավարձ	**5.671.992**	**18.404.042**
Գործուղումներ	**764.000**	**814.000**
Սարքավորումներ	**9.870.000**	**5.721.500**
Գիտական հանդեսի հրատարակում	**253.920**	**253.920**
ԸՆԴԱՄԵՆԸ՝	***16.559.912***	***25.193.462***

Բերված աղյուսակից երևում է, որ 2021 թվականին 2020-ի համեմատությամբ ֆինանսներն աճել են 8.633.550 ՀՀ դրամով:

Խնդիր 3.3-ով սահմանված է՝ «Խթանել Ակադեմիայի հետազոտական գործունեության միջազգայնացումը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Ավելացնել***

օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսում»:

Անհրաժեշտ է նշել, որ Ակադեմիայի կողմից հրատարակվող «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսում աստիճանաբար ավելացվում են օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը: 2020-2021 ուսումնական տարվա No 17, No 18 գիտական հանդեսներում հրատարակված 62 հոդվածներից 5-ը ներկայացված է ռուսերեն լեզվով, իսկ 2021-2022 ուսումնական տարվա No 19, No 20 գիտական հանդեսներում հրատարակված 49 հոդվածներից 4-ը ներկայացված են անգլերեն, 16-ը՝ ռուսերեն լեզուներով, ինչը նախորդ համարի համեմատ շուրջ 35%-ով ավելին է:

«Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են 22 գիտական ճանաչում և վաստակ ունեցող գիտնականներ (որոնցից 4-ը՝ օտարերկրյա, շուրջ 18%): Հանդեսում տպագրվում են միայն երաշխավորված և գրախոսված հոդվածներ:

3.3 Խնդրի 2-ից 5-րդում նախատեսված գործողությունների ուղղություններով Ակադեմիան անընդհատ համապատասխան աշխատանքներ է տանում հետագայում բարելավման նպատակով:

Խնդիր 3.4-ով սահմանված է՝ ***«Ընդլայնել Ակադեմիայի ուսանողների, ՊԴԿ-ի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր ու այլ շահակից կազմակերպություններ և հակառակը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Նպաստել միջազգային դրամաշնորհային ծրագրերի ավելացմանը, հիմքեր ապահովելով Ակադեմիայի ՊԴԿ-ի, ասպիրանտների, ուսանողների շարժունության ավելացմանը կրթական, հետազոտական և այլ նպատակներով»:***

Ակադեմիայում շարունակական աշխատանքներ են տարվում միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրագործման ուղղությամբ և 2022 թվականին առկա է դրական արդյունք՝ հաստատվել է «Համայնքահեն խելացի քաղաք թվային երկվորյակ հարթակ՝ օպտիմալացված ԱՌԿ գործողություններ և համայնքների աղետների դիմակայունության հզորացում (PANTHEONs)» ծրագիրը, որի ժամկետը 3 տարի է, իսկ աշխատանքները կսկսվեն 2022 թվականի նոյեմբերի 1-ից:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների համար իրականացնել օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ:***

Ակադեմիայում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար իրականացվում են վերապատրաստումներ՝ ուղղված օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը:

Ակադեմիայում առկա են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների օտար լեզուների վերապատրաստման առանձին խմբեր: Դասախոսական կազմից ևս 4-ը վերապատրաստվում են արտակարգ իրավիճակների նախարարությունում:

ՆՊԱՏԱԿ IV. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Զարգացնել պրոֆեսորադասախոսական կազմի ներուժը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Կրթության որակի շարունակական բարձրացումը պահանջում է զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, մարդկային որակյալ ռեսուրսները և ապահովել անհրաժեշտ միջավայր՝ առաջադրված խնդիրների իրականացման համար:

«Մարդկային ռեսուրսներ» նպատակի ***խնդիր 4.1-ի՝ «Զարգացնել պրոֆեսորադասախոսական կազմի ներուժը»*** 5-րդ գործողությամբ սահմանված է «Վերանայել ՊԴԿ-ի ուսումնական բեռնվածության նորմերը», ինչը հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է և առկա է հաստատված ՊԴԿ-ի ուսումնական բեռնվածության վերանայված նորմեր:

Նպատակ 4-ի, ***խնդիր 4.1-ի*** մնացած գործողությունների ուղղությամբ նույնպես տարվում են շարունակական աշխատանքներ:

Սույն նպատակի ***խնդիր 4.2-ով*** սահմանված է. «***Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ***»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման ծրագիր»:***

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի աշխատողներն անցել են մասնագիտական վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներ, մասնակցել են կլոր սեղան-քննարկումների:

Խնդրի 2-րդ և 3-րդ գործողություններով համապատասխանաբար նախատեսված է. ***«Վերանայել վարչական աշխատողների պաշտոնների անձնագրերը»*** և ***«Վերանայել ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների պաշտոնների անձնագրերը»***: Հիշյալ ժամանակահատվածում մշակվել և հաստատվել են Ակադեմիայի պրոոեկտորների, որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների, ուսումնաօժանդակ համակազմի աշխատողների պաշտոնների անձնագրերը, որոնք 2021/2022 ուսումնական տարվանից կցվել են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերին որպես անբաժանելի հավելված (թվով՝ 8 պաշտոնի անձնագիր): Ընթացքի մեջ է ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների պաշտոնների անձնագրերի մշակումը:

Խնդրի 4-րդ գործողությունով սահմանված է ***«Ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ»***: Շարունակվում են Ակադեմիայի վարչական, ուսումնաօժանդակ կազմերի մասնագիտական վերապատրաստման ու որակավորման բարձրացման համալիր ծրագրի մշակման աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել նշված տարակարգերի աշխատողների մասնագիտական վերապատրաստում և ատեստավորում: Գործընթացը կրելու է պարբերական բնույթ և ներ-

առելու է Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումների աշխատողներին:

Վերապատրաստվել են՝ քարտուղարը, գլխավոր հաշվապահը, հաշվապահը, գնումների մասնագետը, մեթոդիստները (շուրջ 20 մարդ):

2022թ.-ի հունիսի 13-17 գնումների մասնագետը մասնակցել է «Գնումների համակարգողների որակավորման քննության նախապատրաստում» ծրագրի 5-օրյա դասընթացին:

Խնդիր 4.3-ով սահմանված է. ***«Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Վերանայել աշխատողների աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճը»:***

2021-2022 ուսումնական տարվանից սկսած վերանայվել և շուրջ 10%-ի չափով բարձրացվել է Ակադեմիայի աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափը, ինչպես նաև առկա է պարգևատրման փաստը յուրաքանչյուր եռամսյակի համար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը»:*** 2021-2022 ուսումնական տարվանից սկսած Ակադեմիայում բարձրացվեց պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական ժամի վճարի չափը, օրինակ պրոֆեսորը մեկ ակադեմիական ժամի համար վճարվում է 3000, որոշ դեպքերում նաև 3500 ՀՀ դրամ:

Հիշյալ ժամանակահատվածում աշխատակիցները պարգևատրվել են 38.820.393 ՀՀ դրամի չափով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ներդնել սոցիալական աջակցության ծրագրեր»:*** Այս նպատակով Ակադեմիայում գործում է սեփական միջոցների հաշվին ուսման վարձի մասնակի փոխհատուցման զեղչ մարտական հերթապահություն իրականացրած և Ակադեմիայի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ)>=15 շեմը հաղթահարած ուսանողների, Փ/Ծ աշխատողների երեխաների և հաշմանդամ ուսանողների համար, այդ թվում՝

- մարտական հերթապահություն իրականացրած և Ակադեմիայի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ)>=15 շեմը հաղթահարած 7 ուսանող օգտվել է՝ ընդհանուր 453.000 դրամ ուսման վարձի զեղչից,
- Ակադեմիայի կանոնակարգով սահմանված Փ/Ծ աշխատողների երեխաների և հաշմանդամ ուսանողների ուսման վարձերի զեղչերից առկա և հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված 14 ուսանող օգտվել է՝ ընդհանուր 522.000 դրամ ուսման վարձի զեղչից:

Պարբերաբար, նաև 2022 թվականին Ակադեմիայի աշխատակիցների համար ներդրվել է բժշկական ապահովագրության փաթեթ:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի ֆինանսական միջոցների հաշվին օգնություն է ստացել շուրջ 20 աշխատակից՝ 1.137618 ՀՀ դրամի չափով:

Ուշադրությունից չեն վրիպել նաև Ակադեմիայի կին աշխատողները և Ակադեմիայի ֆինանսական միջոցներից հատկացվել է

15 միլիոն ՀՀ դրամ 2022 ապրիլի 7-ի՝ մայրության ու գեղեցկության տոնի կապակցությամբ:

2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վճարովի համակարգում պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցում տրվել են՝

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից և Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցների, ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողների ընդհանուր փոխհատուցումը կազմում է 39.924.000 ՀՀ դրամ:

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պայմաններն ապահովող և պահանջները բավարարող ենթակառուցվածքներ:

Անհրաժեշտ է ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող ակադեմիական ենթակառուցվածքներ:

ՈՒսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը պահանջում է ապահովել կայուն և որակյալ ենթակառուցվածքներ, ինչպես նաև ֆինանսական համակարգի արդյունավետ կառավարման մեխանիզմներ:

«Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակի ***խնդիր 5.1-ով*** սահմանված է՝ «***Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային և լաբորատոր պայմանները, արդիականացնել ենթակառուցվածքները***»:

Խնդիր 5.1-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան տեխնիկապես վերազինել առկա լսարաններն ու լաբորատորիաները, «Լուսակերտ» ուսումնագործնական վարժահրապարակը, ձևավորել և կահավորել գիտահետազոտական նոր լաբորատորիա»:***

Այս խնդրի կապակցությամբ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում կատարվել են ***25.193.462*** դրամի ներդրումներ, որոնց

շրջանակներում ձեռք են բերվել **5.721.500** դրամի լաբորատոր սարքավորումներ:

Խնդիր 5.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ, ապահովել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ուսումնառության ֆիզիկական պայմանները»:***

Այս ուղղությամբ Ակադեմիայի տարբեր մասնաշենքերում իրականացվել են վերանորոգման և շինարարական մի շարք աշխատանքներ, մասնավորապես Ակադեմիայի գլխավոր մասնաշենքի մինչև գլխավոր մուտքը, վերելակը և հինգերորդ հարկը հարմարեցված են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Խնդրի 3-րդ և 4-րդ գործողությունների ուղղությամբ, որոնցով համապատասխանաբար նախատեսված է՝ ***«Անհրաժեշտ մարզագույքով համալրել «Լուսակերտ»-ի մարզադահլիճը, կառուցել լողավազան, ապահովել Ակադեմիայի ուսանողների ու աշխատակիցների ֆիզիկական դաստիարակության, կիրառական սպորտի զարգացման պայմանները» և «Ավարտին հասցնել ծխապատ տարածքի լաբորատորիայի ստեղծման, տարաբնույթ խոչընդոտների հաղթահարման վարժահրապարակների, սպորտային հրապարակի ձևավորման և բարելավման աշխատանքները»,*** հաշվետու ժամանակաշրջանում վերոգրյալ ուղղությամբ կատարվել է որոշակի աշխատանք: Ակադեմիայի սպորտ-դահլիճը հագեցված է համապատասխան գույքով: Սպորտ-դահլիճում աշխատակիցներն աշխատանքային ժամերից դուրս մարզվում են:

Խնդրի 5-րդ և 6-րդ գործողությունների ուղղությամբ, որոնցով համապատասխանաբար նախատեսված է՝ ***«Կատարելագործել ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (ՃԿԱԿ)-ի մոդելով կաբինետի հնարավորությունները՝ ուսումնական գործընթացում տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների, իրավիճակային վերլուծությունների և կառավարչական խաղերի ներդրման աշխատանքների ուղղությամբ» և «Աշխատանք տանել նոր ուսումնական մասնաշենք ձեռք բերելու ուղղությամբ»***:

Հաշվետու ժամանակաշրջանում վերոգրյալ ուղղություններով ևս իրականացվել է որոշակի աշխատանք (Ակադեմիան գրավոր դիմել է ՀՀ ԱԻՆ և ՀՀ ԿԳՄՍ), չնայած որ արդյունքները դեռևս տեսանելի չեն:

Խնդիր 5.2-ով սահմանված է. ***«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանը»:***

Սույն Խնդրի 1-ին՝ ***«Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ»*** և 2-րդ՝ ***«Մշակել գրադարանի զարգացման ծրագիր»*** գործողություններով նախատեսված փաստաթղթերը գտնվում են մշակման փուլում:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված՝ տեղեկատվական համակարգերի զարգացման ուղղությամբ Ակադեմիայում ստեղծվել է էլեկտրոնային հարթակ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (դասախոսությունների նյութեր, առարկայական ծրագրեր, հարցաշարեր, քարտեզներ, իրավիճակային խնդիրներ, թեստեր, գրականություն, մասնագիտական ֆիլմեր և այլն) առնչվող տեղեկատ-

վությամբ: Էլեկտրոնային հարթակի ձևավորումն սկսվել էր դեռևս 2018 թվականից, պայմանավորված COVID-19 համավարակով: 2020 թվականի մարտից սկսած Ակադեմիան սահուն և առանց խոչընդոտների անցել է հեռավար (Ակադեմիայի առցանց հարթակի միջոցով) ուսուցման: Հարթակի նպատակը դասախոսների և ուսանողների համատեղ էլեկտրոնային ուսուցման առցանց աշխատանքն է: Էլեկտրոնային ուսուցման առցանց համակարգն ուսանողներին հնարավորություն է ընձեռում գտնելու իրենց անհրաժեշտ նյութերը, մասնակցելու ֆորումների և տեսագիտաժողովների, քննությունների, ներկայացնելու կատարված հանձնարարությունները և այլն: Առցանց համակարգի օգնությամբ հարթակ մուտք գործող սովորողն ամբողջական տեղեկատվություն է ստանում դասընթացի ընդհանուր նկարագրի մասին, տեղեկանում է առաջադրանքների կատարման համար սահմանված ժամկետներին և այն աղբյուրներին, որոնք անհրաժեշտ են տվյալ թեման յուրացնելու համար: Սովորողներին տրվում են գործնական առաջադրանքներ իրավիճակային խնդիրների, վարժությունների, թեստերի տեսքով և այլն: Հարթակում հստակ երևում է նաև սովորողի անհատական աշխատանքները: Ուսանող-դասախոս կապի շնորհիվ հարթակում սովորողները հնարավորություն ունեն պրոֆեսորադասախոսական կազմին հարցեր առաջադրելու և ստանալու դրանց պատասխանները: Ինչպես արդեն վերևում նշեցինք, հարթակում, բացի տեքստային նյութից, հնարավոր է տեղադրել նաև տեսանյութեր:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. **«Ընդլայնել ուսանողների հասանելիությունը միջազգային գրադարանային**

ցանցերին»: Ակադեմիան համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների գրադարանների հետ: Կապը հիշյալների հետ իրականացվում է http://www.mes.am միջոցով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. **«*Ակտիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը*»:** Գրադարանը շարունակում է նոր գրականության համալրումը: Գրադարանային ֆոնդը համալրվել է 25 անուն 81 միավոր գրականությամբ: Բարերարների կողմից ստացվել է ավելի քան 40 միավոր արժեքավոր գրականություն:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. **«*Գրադարանային ծառայությունների որակի բարելավում*»:** Հաշվետու ուսումնական տարում գրադարանից օգտվել է շուրջ 110 դասախոս և 1050 ուսանող: Գրադարանայի ֆոնդից հաջողությամբ օգտվում են նաև այլ ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները:

Ակադեմիայում նկատելի է գրադարանային ծառայություններից օգտվողների բավարարվածության թվի աճ:

Ընթերցասրահում առկա է երկու օդափոխման համակարգ և համակարգիչներ՝ ինտերնետ կապով:

ՆՊԱՏԱԿ VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ակադեմիայի ֆինանսական անկախություն ապահովելու համար նպատակահարմար է ապահովել մի կողմից՝ դիմորդների կայուն հոսք, մյուս կողմից՝ ֆինանսական մուտքերի այլընտրանքային աղբյուրներ:

Ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքեր:
Բարձրացնել ֆինանսների կառավարման արդյունավետությունը:
Բարելավել Ակադեմիայի կառավարման համակարգը, նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը:

Ռազմավարական VI-րդ նպատակի ***6.1. խնդրով*** սահմանված է. «***Ապահովել անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներհոսքն Ակադեմիա՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները, մեծացնելով ծավալները»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է ***«Ակտիվացնել Ակադեմիայի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին»:*** Ակադեմիան ընդգրկված է Կենտրոնական Ասիայում և Կովկասում կենսաանվտանգության ասոցացիա ծրագրում և «Համայնքահեն խելացի քաղաք թվային երկվորյակ հարթակ՝ օպտիմալացված ԱՌԿ գործողություններ և

համայնքների աղետների դիմակայունության հզորացում (PANTHEONs)» ծրագրում:

Ակադեմիայում շարունակվում են աշխատանքները կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին մասնակցության ուղղությամբ:

Խնդրի 2-րդ գործողությամբ՝ ***«Ընդլայնել Ակադեմիայի լրացուցիչ վճարովի ծառայությունների համակարգը»*** ուղղությամբ նույնպես տարվում են աշխատանքներ:

Խնդրի 3-րդ գործողությամբ նույնպես Ակադեմիայում՝ ***«Խրախուսել շրջանավարտների և այլ շահակիցների կողմից Ակադեմիային ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»*** ուղղությամբ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվում են գործընկերային աշխատանքներ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է ***«Ապահովել ուսանողների և աշխատակիցների ազատ ժամանցի կազմակերպումը հանգստյան օրերին և արձակուրդների ընթացքում»:*** Այս ուղղությամբ Ակադեմիան ուսանողների համար կազմակերպում է տարբեր բնույթի էքսկուրսիաներ, այց թանգարաններ («Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայաստանի ազգագրության թանգարան, Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան և այլն), կինոդիտումներ, գրական երեկոներ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ մրցույթներ, սեմինարներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

Սովորողների համար կազմակերպվող թեմատիկ սեմինարները հաստատված են տարեկան պլանով, որպես ուսումնական նյութ՝ օգտագործվում են ֆիլմեր, տեսանյութեր, վավերագրական արխիվ: Թեև ծրագիրը միայն քոլեջի ուսանողների համար է, սակայն ներգրավվում են նաև բակալավրիատի ուսանողները:

Ակադեմիայում ապրիլի 7-ի՝ Մայրության ու գեղեցկության տոնի կապակցությամբ կազմակերպվել է երաժշտական ցերեկույթ, ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների համար:

Նշված ցերեկույթին մասնակցում էր նաև Ակադեմիայի «911» պարի խումբը և այլ հայտնի երգիչ, երգչուհիներ:

Խնդիր 6.2-ով *սահմանված է* ***«Զարգացնել Ակադեմիայի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ *նախատեսված է.* ***«Ակադեմիայի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով ներդնել ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ»:***

Այդ նպատակով ներդրվել են.

- ✓ «Հայկական ծրագրեր, 7-րդ տարբերակ» հաշվապահական ծրագիրը,
- ✓ Լավարկվել է ուսանողների հաշվառման ծրագիրը:

Խնդիր 6.2-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Պարբերաբար վերապատրաստել հաշվապահության աշխատակազմը»:***

Ակադեմիայի հաշվապահության աշխատակազմը պարբերաբար մասնակցել է վերապատրաստման դասընթացներին և ստացել վկայականներ ու հավաստագրեր (4 աշխատակից): Հաշվապահության 2 աշխատակից, որպես հանրային հատվածի գլխավոր հաշվապահ լիցենզավորված են:

Սահմանվել են հաշվապահական ծառայության գործառույթների իրականացման ընթացակարգերը:

Նույն ***խնդրի 3-րդ*** գործողությամբ նախատեսված է. **«Իրականացնել ռեսուրսախնայողության անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր»**:

Ռեսուրսախնայողության համար իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- մասնաշենքերում լուսատուները փոխարինվել են «LED» լուսատուներով,
- գործում է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Mulberry» համակարգը,
- խմելու ջրի և ջեռուցման համակարգերում շարունակվել են տեղադրվել համապատասխան ռեսուրսախնայող էլեկտրոնային ծրագրեր:

Խնդիր 6.3-ով նախատեսված է՝ «Կատարելագործել Ակադեմիայի գործունեության ներքին իրավական դաշտը և կառավարման համակարգը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Օպտիմալացնել Ակադեմիայի կառավարման համակարգը՝ ըստ ռազմավարական ծրագրի խնդիրների, բարձրացնել ստորաբաժանումների***

գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են Ակադեմիայի կառուցվածքի օպտիմալացման, ստորաբաժանումների արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված մեխանիզմների և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները:

Խնդրի 2-րդ *գործողությամբ* նախատեսված է. ***«Զարգացնել Ակադեմիայի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգերը»:***

Այս գործողությամբ նույնպես շարունակվում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգերի զարգացման ուղղությամբ աշխատանքները, 2019 թվականին Ակադեմիայի կողմից ձեռք է բերվել նոր սերվեր: Բնականաբար, սերվերների հզորության շարունակական ուժեղացման կարիք է զգացվում, և այդ ուղղությամբ պարերաբար տարվում են ուժեղացման աշխատանքներ: Պետք է նշել, որ Ակադեմիայում տեղեկատվական համակարգերի զարգացումը կրում է շարունակական բնույթ:

Խնդրի՝ «Մշակել և ներդնել Ակադեմիայի ներքին աուդիտի իրականացման կարգ» 3-րդ գործողության իրականացման համար շարունակվել են ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը չափող ցուցանիշների և աուդիտի իրականացման ընթացակարգերի մշակման ուղղությամբ գործընթացները: Մասնավորապես, որոշակի աշխատանքներ են իրականացվել ուսումնական ստորաբաժանումների (ամբիոնների) ներքին աուդիտը փոխարինելու նրանց իրականացրած հիմնական գործունեության՝ կրթական

ծրագրերի մատուցման որակի պարբերական մշտադիտարկմամբ և վերանայմամբ: Համապատասխան գործընթացները մեկնարկել են ընթացիկ ուսումնական տարում: Չնայած որ, Ակադեմիան իր գործունեության բոլոր հիմնական ոլորտներում հավաքագրում, մշակում, վերլուծում և հրապարակում է գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշները, այնուամենայնիվ, համանման ցուցանիշների համեմատումը տեղական և արտասահմանյան բուհերի հետ դեռևս մնում է խնդրահարույց համադրելի բուհերի բացակայության պատճառով:

Տեղին է նշել, որ ընթացիկ տարվա հուլիսի 14-ին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամի փորձագիտական խումբն այցելել էր Ակադեմիա որակի ապահովման ներքին համակարգի և կրթական ծրագրերի մշտադիտարկում անցկացնելու նպատակով: Փորձագիտական խմբում ընդգրկված էին մասնագետներ ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության, քաղաքականության մշակման ու իրականացման և այլ բաժիններից:

Մշտադիտարկման նպատակն էր պարզել, թե հավատարմագրումից հետո Ակադեմիայում ի՞նչ աշխատանք է իրականացվել, այդ թվում նաև փորձագետների կողմից նշված թերությունները վերացնելու ուղղությամբ: Պետք է ընդգծել, որ 2019 թվականի հավատարմագրման ժամանակ փորձագետների կողմից ուսումնասիրվել էր Ակադեմիայի առկա ռեսուրսները, վարած քաղաքականությունը, ծավալած գործունեության ու որդեգրած առաքելության համապատասխանությունը, կառավարման համակարգի, վարչական կառույց-

ների արդյունավետության, մատուցվող կրթական ծրագրերի և Ակադեմիայի առաքելության համապատասխանությունը, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական անհրաժեշտ որակները, ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, Ակադեմիայի արտաքին կապերը, որակի ապահովման ներքին համակարգը և այլն:

Հիշյալ ***խնդրի 4-րդ*** գործողության՝ ***«Ապահովել ուսանողների ներգրավվածությունն Ակադեմիայի կառավարման գործընթացներում»*** ուղղությամբ ուսանողական խորհրդի կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերը (Օրինակ՝ ուսանողական գիտաժողովների, միջազգային սեմինարների, ուսումնավարժանքների մասնակցություն, տարատեսակ միջոցառումների կազմակերպում, մասնակցություն այլ բուհերի կողմից կազմակերպված միջոցառումներին և այլն) միտված են բուհի գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու Ակադեմիայի ուսանողական կյանքին ուսանողների մասնակցության խթանմանը: Ակադեմիայի կառավարման գործընթացներում սովորողների մասնակցությունն ապահովվել է գործող կարգի (ՀՀ օրենսդրություն, Ակադեմիայի կանոնադրություն, ներքին իրավական ակտեր) համաձայն տարբեր մակարդակի կառավարման մարմիններում սովորողների ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ: Ակադեմիայի կառավարման համակարգում առկա է ուսանողների 25% ներգրավվածություն:

Խնդիր 6.4-ով սահմանված է՝ «Ապահովել Ակադեմիայում իրականացվող գործընթացների թափանցիկությունը»:

Խնդրի իրագործմանն ուղղված *1-ին գործողությամբ* նախատեսված է. «***Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, կիրառվող գնահատման չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ նրանց իրազեկվածության մակարդակը***»: Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը բարձրացնելու նպատակով մշակվել են բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները, որոնք տրամադրված են ամբիոններին, գրադարանին, տեղադրված են http://www.mes.am և հասանելի են բոլոր ուսանողներին:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «***Բարձրացնել Ակադեմիայի կառավարման վերաբերյալ աշխատակիցների իրազեկվածության մակարդակը***»: Այս ուղղությամբ իրականացվում է շարունակական աշխատանք, բարելավված է աշխատակիցների իրազեկման հարցերը կառավարման վերաբերյալ, հատկապես, էլեկտրոնային դաշտի ձևավորման արդյունքում (այդ թվում նաև 911 էլեկտրոնային շաբաթաթերթը): Բացի այդ, Ակադեմիան ընդգրկված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության արհեստակցական կազմակերպության մեջ, ինչը հնարավորություն է տալիս աշխատակիցների իրազեկվածությունը նաև ԱԻՆ համակարգի կառավարման գործընթացների վերաբերյալ: Միաժամանակ, պարբերաբար աշխատողներին տեղեկացվել է նրանց հուզող խնդիր-

ների, արհեստակցական կազմակերպության որոշումների, կատարված աշխատանքների հաշվետվությունների մասին: Աշխատակիցները պարբերաբար օգտվել են արհեստակցական կազմակերպության դրամական օգնություններից, ինչպես նաև օգտվել են առողջարանային, բուժման, անդամների երեխաների հանգստի (Դիլիջանի, Սևանի ամառային ճամբարներ) հնարավորություններից և այլ միջոցառումներից (շուրջ 40 աշխատակից և 60 երեխա):

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ապահովել Ակադեմիայի ՈԱԿ-ի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը»:*** 3-րդ գործողության շրջանակում Ակադեմիայի կայքէջում, ֆեյսբուքյան էջում և «911 էլեկտրոնային թերթ»-ում պարբերաբար ամբողջական տեղեկատվություն է տրամադրվում և տեղադրվում նյութեր ՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ, ինչի արդյունքում ապահովվում է Ակադեմիայի ՈԱԿ-ի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

6-րդ խնդրի 4-6-րդ գործողությունների ուղղությամբ նույնպես աշխատանքները շարունակվում են, ինչի մասին վկայում են Ակադեմիայի «911 էլեկտրոնային թերթ»-ի, ֆեյսբուքյան էջի և կայք էջի անընդհատ նոր նյութերի տեղադրումը, հասարակության հետ հետադարձ կապն ու դրա արդյունքում հավաքագրված տեղեկատվության բազան:

ՆՊԱՏԱԿ VII. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակադեմիայի զարգացմանը նպաստող գործոնների շարքում կարևորվում է հատկապես հանրային կապերի միասնական համակարգն ու հասարակության հետ կապերի ամրապնդումը, Ակադեմիայի դրական կերպարի ձևավորումն ու պահպանումը:

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը

«Հանրային ներգրավում և ծառայություններ» ռազմավարական նպատակի ***Խնդիր 7.1-ով*** սահմանված է. «***Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը***»:

Խնդիր 7.1-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»:***

2021-2022 ուսումնական տարում շարունակվել են Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, ինչը նպաստել է հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը: Միաժամանակ պետք է փաստել, որ Ակադեմիայի

կայքէջում առկա է երեխաների համար, թերթերը մեր մասին, հետադարձ կապ բաժինները, այսինքն առկա է հասարակության հետ հետադարձ կապ:

Արդյունքում՝ ձևավորվել է ՀԼՄ-ներում Ակադեմիայի վերաբերյալ նպատակային և դրական լուսաբանումների թվի աճ:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային ու ծրագրային բաղադրիչները»:***

Շարունակվել են Ակադեմիայի ինտերնետային կապի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն առկա գործողությունների պլանի համաձայն:

Հաշվետու ժամանակահատվածում նույնպես Ակադեմիայի կայքում շարունակվում են թարմացվել ու տեղադրվել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տվյալները, լուսանկարները, շարունակաբար ավելացվում են Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից մշակված գիտական, ուսումնական ու ուսումնամեթոդական հրապարակումները, այլ փաստաթղթեր, այդ թվում՝ կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն:

Կայքում առանձին բաժիններով ներկայացված է շուրջ 50 տեսաֆիլմ՝ քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության և տարբեր վտանգների ուղղություններով:

Պայմանավորված վտանգների, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ռազմական դրության պայմաններում քաղաքացիական պաշտպանության հարցերի հետ Ակադեմիա-

յի պրոֆեսորադասախոսական կազմից շուրջ 15 մասնագետ ելույթ է ունեցել Հայաստանի Հանրային, Արմենիա TV հեռուստաալիքներով, ռադիոյով և տարբեր ՁԼՄ-ներով: Իրականացվել է շուրջ 20 մասնագիտական հաղորդաշար (նյութերը տեղադրված են՝ http://www.mes.am, https://www.facebook.com/cmsa.academy/, http://cmsa.am/, https://911tert.am/ կայքերում:

Մեծ աշխատանք է կատարվել նաև բնակչության ուսուցման նպատակով, մասնավորապես ստեղծվել է էլեկտրոնային հարթակ՝ դիմակայուն գրադարան - http://library.cmsa.am/hy/ հարթակ, որից օգտվում են ոչ միայն ուսանողներն ու դասախոսները, այլև բնակչության լայն շերտերը (www.cmsa.am): Վերոհիշյալ հարթակը նպաստում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ոլորտում բնակչության անվտանգության մշակույթի ձևավորմանը և համարվում է բնակչության ուսուցման նոր մեթոդաբանություն:

Վերապատրաստման մասնակցած ուսումնական հաստատություններին (հանրակրթական դպրոց, ՆՈՒՀ, ՄՄՈՒՀ. ԲՈՒՀ) տրամադրվել են Ակադեմիայում ստեղծված ուսումնական նյութերի էլեկտրոնային տարբերակները:

Այս ժամանակահատվածում ևս ապահովվել է 911 էլեկտրոնային պաշտոնաթերթի կայուն գործունեությունը՝ https://911tert.am/:

Շարունակվում են աշխատանքները, հատկապես մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ: Տեղին է նշել, որ Ակադեմիայի «Մշակույթի կենտրոն» հաճախող ուսանողների կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ

դպրոցներում, մանկապարտեզներում, գրադարաններում, մանկատներում և այլուր(www.cmsa.am):

Օրինակ՝ հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրը, Երևանի Շառլ Ազնավուրի անվան հրապարակում Ակադեմիայի մշակույթի կենտրոնի 911 թատերախումբը փոքրիկներին ներկայացրել է «Աղետիկը» բեմադրությունը և «Երեք խոզուկները» մյուզիքլը, որոնց միջոցով ներկաները ծանոթացել են երկրաշարժի, հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների դեպքերում անվտանգության կանոններին:

Կայքում առանձին բաժնով է ներկայացված նաև «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի բոլոր համարները՝ http://www.mes.am:

Կայքի այցելուների թիվը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 1528-ի (ըստ սերվերի ներքին վիճակագրական տվյալների):

2020 թվականից գործում է Ակադեմիայի էլեկտրոնային հարթակը, որտեղ զետեղված են և պարբերաբար թարմացվում են դասընթացների համար անհրաժեշտ բոլոր նյութերը (դասախոսությունների նյութեր, դասընթացի ծրագրեր, հարցաշարեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ, սահիկներ, տեսահոլովակներ, պաստառներ և այլն): Պարբերաբար թարմացվում է նաև Ակադեմիայի պաշտոնական տեսահոլովակը՝ որտեղ ներառվում է Ակադեմիայի գործունեությունն ու աստիճանական զարգացումը:

Շարունակական աշխատանք է իրականացվում «Որակի ապահովման» (http://doc.cmsa.am) լրամշակված փաստաթղթերի՝

հայեցակարգեր, կանոնադրություններ, կանոնակարգեր, ընթացակարգեր, ծրագրեր, հաշվետվություններ, ֆինանսական և այլ փաստաթղթերի տեղադրման ուղղությամբ:

Կայքի «Ակադեմիայի առօրյան» բաժնում տեղադրված են Ակադեմիայի մասին ինչպես արխիվային, այնպես էլ առօրյա լուսանկարներ:

Էլեկտրոնային տարբերակով տեղադրվել են 2021-2022 ուսումնական տարվա Ակադեմիայի ընդունելության արդյունքում, բոլոր կրթական ծրագրերով ընդունվածների ցուցակները:

Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է շուրջ 350 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 142 հայտարարություն:

Խնդիր 7.1-ի *3-րդ գործողությամբ նախատեսված է.* ***«Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը»:***

2021-2022 ուսումնական տարում շարունակվել է Ակադեմիային հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելու գործընթացը:

Սոցցանցերում ակտիվորեն գործարկվում է Ակադեմիայի, «Facebook»-ի (crisis management state academy) էջը, որտեղ բազմաթիվ այցելուներ դիմել են տարատեսակ հարցերով, էջի հետևորդների թիվը հասել է 200-ի նախորդ ուսումնական տարվա համեմատ աճելով մոտ 70-ով:

Ակադեմիայի գլխավոր մասնաշենքերի նախասրահի, էլեկտրոնային կապերի դահլիճի, դիմորդների ընդունելության լսարանի

հեռուստաէկրաններին ցուցադրվող Ակադեմիայի մասին պատմող ֆիլմերը պարբերաբար թարմացվում են:

Հիշյալ ***խնդրի 4-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Ընդլայնել և զարգացնել Ակադեմիայի ներգրավումը տարածաշրջանային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները»:***

Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ 2021-2022 ուսումնական տարում ևս Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմը բազմիցս մասնակցել է միջազգային և հանրապետական գիտական, գիտագործնական գիտաժողովներին, խորհրդակցություններին խորհրդաժողովներին և ներկայացրել շուրջ 25 զեկուցում, մասնակցել է Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին, վեբինարներին, կլոր սեղաններին ու սեմինարներին, շարունակել է համագործակցությունը Ֆրանսիայի ՄԳՇՄԱԱ-ի (մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության խթանման ասոցացիա) հետ, ՄԱԿ-ի ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Օքսիջեն-ի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Նիդեռլանդիայի, Վրաստանի և Հայաստանի Հանրապետության համապատասխան բուհերի ու կազմակերպությունների հետ:

Ակադեմիան իրականացրել է հայ-ճապոնական համագործակցություն «Աղետների ռիսկի նվազեցման նպատակով ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման բարելավման ծրագրի» շրջանակում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է լրագրողների և ԱԻՆ աշխատակիցների երեք վերապատրաստում:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Հանրային ծառայությունների մատուցմանն ուղղված գրահրատարակչական գործունեության ծավալի ավելացում»:***

Հիշյալ ժամանակահատվածում արժանի ուշադրություն է դարձվել նաև տեղեկատվության աղբյուրների և գրադարանային ֆոնդի հարստացմանը: Գրադարանում առկա է 2219 անուն մասնագիտական գիրք: Գրքերի ընդհանուր թիվը 3793 է, դասագրքերինը՝ 1523, ծրագրային գեղարվեստական գրքերը՝ 584: Առկա է 402 ուսումնամեթոդական գրականություն, 7 ատլաս և բազմաթիվ մասնագիտական ամսագրեր, 75 քարտեզ, 20 համար «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսը, Ակադեմիայի կողմից հրատարակված մեթոդական ու ուսումնական ձեռնարկներ ու բազմաթիվ ցուցադրական, աուդիո-վիդեո, մուլտիմեդիա էլեկտրոնային-տեղեկատվական և այլ նյութեր:

Գրադարանային ֆոնդը ավելացել է հատկապես Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակությամբ հրատարակած ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների ու մենագրությունների հաշվին (շուրջ՝ 30 անուն):

Զգալիորեն մեծացել է գրադարանից օգտվող ուսանողների և դասախոսների թիվը: Շրջանառվել է շուրջ 2200 միավոր գրականություն:

Ներդրվել է էլեկտրոնային գրադարանը, որից օգտվողների թիվը նույնպես մեծ է:

Գրադարանում առկա գրականությունից երևում է, որ ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է,

սակայն մեծ է նաև էլեկտրոնային գրադարանից և Ակադեմիայի հարթակից օգտվողների թիվը:

2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայի հրատարակած գրքերից նվիրատվությունների կարգով տրամադրվել են ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներին, հայաստանյան գրադարաններին, հանրապետական և միջազգային գործընկերներին: Մեծ քանակությամբ գրականություն է տրամադրվում վերապատրաստման ֆակուլտետի ունկնդիրներին, հատկապես՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչներին, մարզերի ու համայնքների քաղաքացիական պաշտպանության պատասխանատուներին: Յուրաքանչյուր տարվա ընթացքում նվիրատվության ձևով տրամադրվում է շուրջ 1000 միավոր գրականություն:

Խնդիր 7.2-ով սահմանված է. «***Կատարելագործել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և Ակադեմիայի կողմից առաջարկի միջև փոխկապակցությունը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Ուսումնասիրել տարածաշրջանում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և վերանայել այդ բնագավառում իրականացվող գործընթացները»:***

Այս առնչությամբ պարբերաբար կատարվում են վերլուծություններ և ներկայացվում հաշվետվություններ:

7.2 խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է՝ ***«Մշակել լրացուցիչ կրթության ռազմավարություն՝ մրցունակ ծրագրեր ներդնելու նպատակով»:***

Մշակման փուլում է լրացուցիչ կրթության ռազմավարությունը, մրցունակ ծրագրեր ներդնելու նպատակով:

Նույն ***խնդրի 3-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Մշակել տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդգրկելով պետական ու մասնավոր կազմակերպություններ»:***

Այս առումով, հաշվետու տարում մշակվել է 5 ծրագիր նախատեսված «Ղեկավար կազմի որակավորման բարձրացման» ֆակուլտետի վերապատրաստվող ունկնդիրների տարբեր մակարդակների համար:

Հիշյալ ***խնդրի 4-րդ*** գործողությամբ նախատեսված է՝ ***«Բարձրացնել Ակադեմիայի կողմից տրամադրվող լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը»:*** Բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով Ակադեմիայի կայքէջում, ֆեյսբուքյան էջում և «911 էլեկտրոնային թերթ»-ում Ակադեմիայի կողմից տրամադրվող լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ պարբերաբար տեղադրվում են հարցազրույցներ պրոֆեսորադասախոսական կազմի հետ, զետեղվում են համապատասխան նյութեր իրականացվող դասախոսություններից, հանդիպումներից, սեմինարներից, գիտաժողովներից, ռադիո և հեռուստատեսային հանդիպումներից և այլն http://www.mes.am, (https://www.facebook.com/cmsa.academy/, https://911tert.am/, http://cmsa.am/, http://library.cmsa.am/hy/, www.cmsa.am):

ՆՊԱՏԱԿ VIII. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակադեմիայի ռազմավարական նպատակների կարևորագույն գրավականներից է զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, նյութատեխնիկական բազան, ինչն ուղղված կլինի կրթական և հետազոտական ծրագրերի պատշաճ մակարդակի ապահովմանն ու արդիականացմանը, ինչպես նաև դրա համապատասխանեցմանը շարունակաբար աճող որակի պահանջներին, միաժամանակ խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին:

Զարգացնել ու կատարելագործել ենթակառուցվածքներն ու նյութատեխնիկական բազան, որակյալ ծառայությունները և դրանք համապատասխանեցնել կրթական ու հետազոտական ծրագրերի պահանջներին:

«Որակյալ ծառայություններ» ռազմավարական նպատակի ***խնդիր 8.1-ով*** սահմանված է. ***«Ապահովել սոցիալական ենթակառուցվածքների պահպանումն ու նյութատեխնիկակական պայմանների բարելավումը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Մշակել կիրառական սպորտի զարգացման համալիր ծրագիր՝ ապահովելով աշխատողների և ուսանողների առավելագույն ներգրավվածությունը մարզական միջոցառումներում»:***

Ակադեմիայում ապահովված է հիշյալ գործողությամբ նախա-

տեսված ծրագիրը և ինչպես աշխատողներն, այնպես էլ ուսանողներն առավելագույնս ներգրավված են մարզական միջոցառումներում:

Ակադեմիայի ջրափրկարարական ցիկլի պետ, միջազգային կարգի փրկարար, ստորջրյա կողմնորոշում և ստորջրյա արագընթաց լողի ԽՍՀՄ սպորտի վարպետ Արտակ Էլմասակյանը Սևանա լճում ամենամյա սուզումներ է իրականացրել գիտնականների խմբի հետ:

2022 թվականի հունիսի 30-ին Երևանի շախմատի տանն անցկացվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության շախմատի առաջնության եզրափակիչը, որին մասնակցում էր փրկարար ծառայության մարզային, Երևանի վարչությունների և կենտրոնական ապարատի 17 ծառայող, հաղթել է Ակադեմիայի պրոռեկտոր, փ/ծ գնդապետ Սարգիս Կյուրեղյանը:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Բարձր առաջադիմությամբ ուսանողների համար սահմանել խրախուսման տարատեսակ ձևեր և միջոցներ, հատուկ ուշադրություն դարձնել ծնողազուրկ, զոհված ազատամարտիկի երեխա, մարտական գործողությունների մասնակից, մարտական հերթապահություն իրականացրած, սահմանամերձ գոտու բնակիչ, հաշմանդամություն ունեցող և անապահով ուսանողների նկատմամբ»:***

2021-2022 ուսումնական տարում հատուկ ուշադրություն է դարձվել ծնողազուրկ, զոհված ազատամարտիկի երեխա, մարտական գործողությունների մասնակից, բարձր առաջադիմությամբ մարտական հերթապահություն իրականացրած, սահմանամերձ

գոտու բնակիչ հանդիսացող, հաշմանդամություն ունեցող և անապահով ուսանողներին:

Վերոհիշյալ ***խնդրի 3-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Նպաստել մշակութային ծրագրերի համակողմանի զարգացմանը, ընդլայնել ուսանողների և աշխատողների մասնակցությունը Ակադեմիայի մշակութային կյանքին»:***

8.1 խնդրի 3-րդ գործողության ուղղությամբ Ակադեմիայում դեկտեմբերի 6-ին՝ Սպիտակի երկրաշարժի 33-րդ տարելիցին ընդառաջ, ցուցադրվել է ֆրանսահայ ռեժիսորներ Սերժ Ավեդիքյանի և Լևոն Մինասյանի՝ «Հավերժական լույս» ու «Ցնցված հող» ֆիլմերը: Ֆիլմերի ցուցադրումից անմիջապես հետո իրականացվել է առցանց քննարկում Սերժ Ավեդիքյանի հետ: Ֆիլմը դիտել են շուրջ 35 աշխատակից և 60 ուսանող:

Ակադեմիայի Ստեփանավանի միջին մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական մասնաշենքում կազմակերպվել է ռեժիսոր Արուսյակ Սիմոնյանի «Իմ նոր տարին» ֆիլմի դիտումը, որին մասնակցել են 25 աշխատակից և միջին մասնագիտական կրթական ծրագրի երրորդ կուրսի 30 ուսանող՝ «Երկրաշարժի հետևանքներն ու կառավարման թերությունները» թեմատիկ դասընթացի շրջանակում:

Սովորողների համար կազմակերպվող թեմատիկ սեմինարները հաստատված են տարեկան աշխատանքային պլանով և որպես ուսումնական նյութ օգտագործվում են ֆիլմեր, տեսանյութեր, վավերագրական արխիվ:

8.2-ի խնդրով սահմանված է. ***«Զարգացնել ուսանողական***

օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով»:

Վերոգրյալ ***խնդրի 1-ին*** գործողությամբ նախատեսված է. ***«Կատարելագործել ուսանողների կրթական և այլ կարիքները վերհանելու և մատուցվող ծառայություններից նրանց բավարարվածությունը գնահատելու մեխանիզմները»:***

Ակադեմիայում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար գործում են մի շարք մեխանիզմներ: Դրանցից է ուսումնական խորհրդատուների ինստիտուտը, ուսանողների մասնակցությունը ֆակուլտետի խորհրդի և ԳԽ-ի նիստերին, հարցումները հարցաթերթերի միջոցով և հանդիպումները ղեկավարների հետ: Ակադեմիայում գործում է «Ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգ»-ը, ինչը օպերատիվ վերհանման հնարավորություններից է (հաստատված ԳԽ, No3, 06.09.2017թ.):

Խորհրդատուները բացահայտում են իրենց ամրագրված ուսանողների կրթական կարիքները և հետևում նրանց ուսումնական առաջընթացին, օգնում հաղթահարել ուսման ընթացքում ծագած դժվարությունները:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներից է ուսանողների մասնակցությունը ֆակուլտետի խորհրդի և ԳԽ-ի, ԱԽ-ի նիստերին, որի շնորհիվ լսելի է դառնում ուսանողների ձայնը:

Ուսանողների կարիքները վերհանելու նպատակով հարցաթերթերը պարբերաբար վերանայվում են:

Այս ***խնդրի 2-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Բարելա-***

վել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները»:

Ակադեմիայում առկա է «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց» ուսանողների համար. որը պարունակում է օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական պահանջների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման կարգի, գնահատման մեթոդաբանության, ուսումնական խորհրդատուների ծառայության՝ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների, իրավական փաստաթղթերի, միջազգային համագործակցության, առկա ուսուցման վճարովի հիմունքով սովորողների ուսման վճարի փոխհատուցման և այլնի վերաբերյալ:

Ուսանողներն իրենց իրավունքներին և պարտականություններին տեղեկանում են խորհրդատուի ծառայություններից, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցից, Ակադեմիայի էլ. կայքից, հայտարարությունների տախտակից և այլն:

Հաշվետու ժամանակում ուսանողական խորհուրդը կազմակերպել և իրականացրել է առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված առաջին հանդիպումը, որին մասնակցել է շուրջ 350 առաջին կուրսեցի: Իրականացվել է նաև սեմինար-դասընթաց, որի նպատակն էր ակադեմիական խմբերի ավագներին ներակադեմիական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամա-

դրումը: Ծրագրի ընթացքում վերապատրաստվել է 15 ակադեմիական խմբի ավագ:

Հիշյալ ***խնդրի 3-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Ուսումնական խորհրդատուների (մենթորների) գործունեությունը դարձնել արդյունավետ»:***

2017 թվականից Ակադեմիայի ռեկտորի հրամանով ուսանողներին մատուցվող խորհրդատվական գործընթացը կազմակերպելու նպատակով նախատեսված է ուսումնական խորհրդատուների (մենթորների) աշխատանք: Հաշվի առնելով, որ խորհրդատվության կարիք ունեն, հատկապես առաջին կուրսեցիներն Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում նախատեսված է վերը նշված աշխատանքի ձևը:

Խորհրդատուն ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի շուրջ իրականացնում է խմբային և անհատական խորհրդատվություններ, ներկայացնում ուսանողների ուսումնական շահերը, կազմակերպում ռեֆլեքսիաներ:

Ըստ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի, յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներին կցվում է հիմնական մասնագիտական առարկա դասավանդող դասախոսներից մեկը՝ որպես ուսումնական խորհրդատու: Խորհրդատուներն աշխատում են ըստ հաստատված տարեկան աշխատանքային պլանի և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ներկայացնում հաշվետվություն ֆակուլտետի խորհրդին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ: Խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, նրանց իրավունքներին և պարտականություններին, Ակադեմիայի ներքին կանոնակարգերին և այլն:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողները բարձր են գնահատում խորհրդատուի աշխատանքը և բավարարվածությունը խորհրդատվական ծառայություններից:

Ակադեմիայում խորհրդատուի աշխատանքներից ուսանողների բավարարվածությունը 1-ից 5 սանդղակով 2021-2022 ուսումնական տարում գնահատվել է 4,5 միավոր:

8.2 խնդրի 4-րդ գործողության ուղղությամբ շարունակվում են համապատասխան փաստաթղթի մշակման աշխատանքները:

Վերոհիշյալ ***խնդրի 5-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Ընդլայնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները»:***

Այս ուղղությամբ դեկանատի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության կողմից մշտապես իրականացվել են քայլեր ուղղված հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին անհրաժեշտ աջակցության և խորհրդատվության տրամադրմանը: Հաշմանդամություն ունեցող ուսանողների ազատ տեղաշարժն ապահովելու համար առկա են վերելակ, թեքահարթակներ և սան-

հանգույց, այսինքն հատուկ կարիք ունեցող ուսանողների համար նախատեսված են մատուցվող ընդլայնված ծառայություններ:

Խնդիր 8.3-ով սահմանված է. ***«Զարգացնել Ակադեմիայի ուսանողական խորհրդի (ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) կարողությունները և խթանել նրանց ինքնակառավարումը»:***

Խնդիր 8.3-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ»:***

Փաստաթուղթը մշակման փուլում է:

Խնդիր 8.3-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Խթանել Ակադեմիայի ՈՒԳԸ և ՈՒԽ ներհանրապետական և միջազգային համագործակցությանը»:***

ՈՒսանողական գիտական ընկերությունը կազմակերպում է ամենամյա գիտաժողովներ և 2022 թվականի գիտաժողովին ներկա էր նաև «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի օտարերկրյա 5 մասնակից Հնդկաստանից:

ՈՒԳԸ–ն ապահովել է նաև Ակադեմիայի ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին, սեմինարներին և տարաբնույթ միջոցառումներին:

Հիշյալ գործողության ուղղությամբ նույնպես աշխատանքները շարունակվում են:

Խնդիր 8.3-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈՒԳԸ գործունեության արդյունավետության բարձրացմանը»:***

3-րդ գործողության իրականացման նպատակով կարևոր նշանակություն ունի ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներից, հատկապես գիտական աշխատանք կատարելու հմտությունների ուսուցման դասընթացը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, հետազոտություն իրականացնելու սկզբունքներին և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին, որին մասնակցում են բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրի սովորողները:

Հիշյալ ***խնդրի 4-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Բարելավել շրջանավարտների կարիերայի գծով աշխատանքները»:***

Ակադեմիայում առկա է շրջանավարտների հետ հետադարձ կապի տվյալների բազա: Այդ բազայի տվյալների համաձայն 2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայի մագիստրոսի կրթական ծրագիրը չորս մասնագիտությամբ՝ «Կառավարում (Ճգնաժամային կառավարում)», «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում (Փրկարարական գործ)», «Հոգեբանություն», «Իրավագիտություն (Ճգնաժամային իրավունք)» մասնագիտությունների գծով 60 շրջանավարտից 29-ն աշխատում են ԱԻՆ-ի տարբեր ստորաբաժանումներում, այդ թվում երեքը՝ ակադեմիայում: Մնացած շրջանավարտներն աշխատում են պաշտպանության նախարարության ստորաբաժանումներում, ոստիկանությունում, միջազգային կառույցներում և այլ կազմակերպություններում:

8.3 խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Աջակցել մարզերում ուսանողների նախաձեռնությամբ և մասնակցությամբ***

կամավորական հրշեջ-փրկարարական ջոկատների ստեղծմանը»:

Մարտի 31-ին Ակադեմիայի ղեկավարությունը հանդիպում ունեցավ Շվեդիայի արտակարգ իրավիճակների գործակալության (MSB) ներկայացուցիչներ, Եվրոպական միության «Բնակչության պաշտպանության ուժեղացումը Հայաստանում» թվինինգ ծրագրի ղեկավար Էրիկ Եգարդտի և հանրային իրազեկման խնդիրների փորձագետ Անն-Շարլոտ Կարլքվիստի հետ:

Հանդիպման ժամանակ քննարկվեց երկու հարց՝ կամավոր հրշեջ-փրկարարական շարժման զարգացումը և աղետներին ու ռիսկերին հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

Քննարկումների արդյունքում նշվեց, որ հիշյալ ծրագրի շրջանակներում կապեր կհաստատվեն Հայաստանի և օտարերկրյա մասնագետների միջև՝ վերապատրաստումների, փորձի փոխանակման նպատակով, ընդգրկելով հարցերի լայն շրջանակ՝ հրշեջ-փրկարարի ամենօրյա, օպերատիվ արձագանքման աշխատանքներից մինչև մարզերում ու համայնքներում ուսանողական կամավոր հրշեջ-փրկարարական ծառայությունների ձևավորում և աղետների ռիսկի կառավարում:

Ղեկավարությունը հյուրերին տեղեկացրեց, որ Ակադեմիան փորձում է զարգացնել ուսանողական հրշեջ-փրկարարական կամավորական շարժումը և որպես գերխնդիր՝ անվտանգության մշակույթի ձևավորումը:

Այս գործողության իրականացմանն է միտված նաև Ակադեմիայի հաջորդ քայլը՝ ԿԳՄՍ նախարարության կողմից Երևանում, Ստեփանավանում և Վայոց ձորի մարզի համայնքներում մեկական

հիմնական կրթությամբ դպրոց կցել Ակադեմիային հրշեջ-փրկարարական թեքումով «Պատանի հրշեջ-փրկարար» հենակետային վարժարան հիմնելու նպատակով: Այդ ուղղությամբ իրականացվել է բավականին շատ աշխատանք, մշակվել է «Ճգնաժամ հաղթահարողները» ուսուցչի ձեռնարկները 2-4 դասարանների համար, իսկ 2-րդ և 3-րդ դասարանների ձեռնարկները հավանության արժանացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Աշխատանքները շարունակվում են և նախատեսվում է ձեռնարկներ մշակել նաև 5-9-րդ դասարանների համար: Ձեռնարկների ստեղծման ուղղությամբ աշխատում է Ակադեմիայի 5 մասնագետ:

ՆՊԱՏԱԿ IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիայի արտաքին կապերը պետք է առավելագույնս ուղղորդվեն ձևակերպված ռազմավարական նպատակների իրականացմանը՝ բոլոր արտաքին շահակիցների հետ նրա բազմակողմանի համագործակցության ընդլայնման և զարգացման միջոցով:

Ակադեմիայի կրթական համակարգի զարգացման և միջազգային կապերի հաստատման կարևորագույն պայմանն այն է, որ փրկարարությունը սահմաններ չի ճանաչում:

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացներն ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Խնդիր 9.1-ով սահմանված է. ***«Մշակել և իրականացնել Ակադեմիայի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն»:***

Խնդիր 9.1-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Մշակել և ներդնել Ակադեմիայի արտաքին կապերի միջազգայնացման քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր»:***

9.1 խնդրի ուղղությամբ առկա է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2021 թվականի հունիսի 8-ի «Արտաքին կապերի և միջազգային համագործակցության բնագավառում արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության կանոնակարգման և համակարգման մասին» հրամանը, որտեղ նշված

է՝«Արտաքին կապերի ու միջազգային համագործակցության բնագավառում կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակի, ենթակա մարմնի և նախարարության կազմում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեությունը, մասնավորապես՝ միջազգային կազմակերպությունների շրջանակներում իրականացվող շփումները, հանդիպումները, պաշտոնական գրագրությունը, տեղային և արտասահմանյան գործուղումները, աշխատանքային քննարկումները և նամակագրությունն իրականացնել բացառապես արտակարգ իրավիճակների նախարարության արտաքին կապերի վարչության միջոցով»:

Խնդիր 9.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ակադեմիայի կայքէջն ուղղորդել գործունեության միջազգայնացման ուղղությամբ»:***

Վերոգրյալ գործողությամբ իրականացված աշխատանքների արդյունքում Ակադեմիայի կայքէջում առկա են գործունեության վերաբերյալ օտարալեզու նյութեր:

Խնդիր 9.1-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»:***

Հաշվետու ուսումնական տարում փրկարարական ամբիոնի երկու դասախոս մասնակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացներին: Միաժամանակ, միջազգայնացման ռազմավարությանը նպաստող գործընթացներին մասնակցելու նպատակով տարբեր ամբիոններից 10 դասախոս մասնակցել է ՌԴ

կողմից կազմակերված 6-ամսյա կուրսերին և ստացել դիպլոմներ:

Խնդիր 9.1-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Իրականացնել Ակադեմիայի ՊԴԿ-ի, աշխատակիցների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ծրագիր»:*** Այս ուղղությամբ Ակադեմիայում յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպվում են անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացներ, ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ սովորողների համար:

Խնդիր 9.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ընդլայնել Ակադեմիայի համագործակցությունը օտարերկրյա կազմակերպությունների հետ՝ ՊԴԿ-ի, ասպիրանտների և ուսանողների վերապատրաստման և փոխանակման ծրագրերի ուղղությամբ»:*** Այս գործողությամբ Ակադեմիան կնքել է համագործակցության պայմանագրեր երեք երկրի հետ, սակայն COVID-19 պատճառով ՊԴԿ-ի, ասպիրանտների և ուսանողների վերապատրաստման և փոխանակման ծրագրեր դեռևս լիարժեք չեն իրականացվել: Սակայն մագիստրոսական կրթական ծրագրի «Հոգեբանություն» մասնագիտության սովորողի մագիստրոսական թեզի ղեկավարը ՌԴ Կազանի Ա.Ն. Տուպոլևի անվան Ազգային հետազոտական տեխնիկական համալսարանից էր, իսկ նույն մասնագիտությամբ մեկ այլ սովորող իր նախաավարտական պրակտիկան իրականացրել է ՌԴ Մոսկվա քաղաքի մունիցիպալ ինքնավար հանրակրթության հաստատություն Բուտովի թիվ 5 դպրոցում:

Պետք է արձանագրել, որ «Որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդատվական խմբի» (The International Search

and Rescue Advisory Group՝ INSARAG) INSARAG-ի չափանիշներով Ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի դասախոսները ԱԻՆ փրկարար ծառայության ծառայողների 2022 թվականի վերապատրաստման դասընթացների ծրագրի համաձայն իրականացրել են «Պարանային աշխատանքներ» թեմայով վերապատրաստում, որին մասնակցել է 15, «Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանքներ» թեմայով՝ 19 փրկարար ծառայող:

Ակադեմիայի և Նիդեռլանդների թագավորությունում ռիսկի հասարակություն կազմակերպության միջև կնքված «Ակադեմիային մասնագիտական սեմինարների տրամադրման, պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողների վերապատրաստման, համատեղ միջազգային գիտահետազոտական և գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի և այլ միջոցառումների անցկացման» պայմանագրի համաձայն, Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար կազմակերպվել են որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման ինչպես առցանց, այնպես էլ առկա դասընթացներ «Ռիսկերի կառավարում», «Ազգային ռիսկերի գնահատման մեթոդոլոգիաներ», «Ռիսկերի գնահատում՝ կրիտիկական ենթակառուցվածքների համար» թեմաներով:

Մեկ այլ համագործակցության արդյունքում էլ Եվրոպական հանձնաժողովի «Բնակչության պաշտպանության ուժեղացումը Հայաստանում» թվինինգ ծրագրի մշտական խորհրդատու, Շվեդիայի արտակարգ իրավիճակների գործակալության (MSB) ներկայացու-

ցիչ Ջոն Անդերսենի հետ պայմանավորվածության համաձայն Ակադեմիայում անցկացվեց Ջոն Անդերսենի հերթական դասախոսությունը՝ պրոֆեսորադասախոսական կազմի (շուրջ 25) և բակալավրի կրթական ծրագրի «Ճգնաժամային կառավարում» մասնագիտության ուսանողների (շուրջ 60) համար, որի ժամանակ նա ներկայացրեց աղետների ռիսկի կառավարման շվեդական փորձն ու մոդելը, ինչպես նաև ներկայացրեց Եվրամիության բնակչության պաշտպանության մեխամիզմի (European Union Civil Protection Mechanism՝ EUCPM) մանրամասները:

Խնդիր 9.2-ով սահմանված է. *«**Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում**»:*

Ակադեմիայում շարունակվում են աշխատանքները ***խնդրի 1-ին*** գործողությամբ՝ «Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների հետ Ակադեմիայի կապերը՝ համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով» նախատեսված կապերը կյանքի կոչելու առումով:

9.2 խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Աշխատակիցների և ուսանողների շրջանում բարձրացնել ակադեմիական շարժունության ծրագրերի մասին իրազեկվածությունը»:***

2-րդ գործողության ուղղությամբ Եվրոպական Միության «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում իրականացվող «Տեխնածին և տարերային աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում արևելյան տարածքում» ծրագրի (Prevention, Preparedness and Response to natural and man-made disasters in Eastern Partnership countries՝ PPRD East)

շրջանակներում երկու կողմերի հետագա կապերի զարգացման համար նախանշվել է ուսանողների ու դասախոսների փոխանակման ծրագրեր, այդ թվում՝ ֆին բազմափորձ մասնագետների կողմից հայ մագիստրոսների թեզերի ղեկավարման հեռանկարը, գիտական հանդեսում համատեղ հոդվածների հրատարակումը և այլն:

Վերոհիշյալ ***խնդրի 4-րդ*** գործողության ուղղությամբ՝ «***Կրթական ծրագրերի վերակառուցում՝ շարժունությունն ապահովելու նպատակով»:*** Պետք է արձանագրել, որ այս գործողության իրականացման ուղղությամբ տարվում են ինտենսիվ աշխատանքներ և գործընթացները բանակցությունների փուլում են, հատկապես՝ Եվրոմիության, Դանիայի և Կազանի Ա.Տուպոլևի անվան ազգային հետազոտական տեխնիկական համալսարանի հետ:

ՆՊԱՏԱԿ X. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Ներդնել որակի ապահովման ներքին համակարգ:
Ակադեմիայում զարգացնել որակի մշակույթ:

Ակադեմիան մասնակցում է կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատման, պետական հավատարմագրման գործընթացներին, ապահովում դրանց թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը:

Որակի մշակույթի ներդրումը դիտարկվում է ներքին և արտաքին համակարգերում: Որակի մշակույթի ներքին համակարգը ենթադրում է կառավարման ներքին արդյունավետ մեխանիզմների ներդրում: Արտաքին համակարգը ենթադրում է թափանցիկության բարձրացում և արտաքին շահակիցների հետ բուհի գործունեության հետադարձ կապի ապահովում:

Այս ասպարեզում անցած ուսումնական տարում ևս Ակադեմիայում իրականացվել են ծավալուն աշխատանքներ:

Շարունակվել են դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման առցանց էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ գործընթացները:

Տպագրվել են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածներն առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

Ակադեմիայի 2020-2024 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված մի շարք խնդիրների գործողություններ ժամանակացույց-պլանի համաձայն մեկնարկել են հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակում: Մասնավորապես ՌԾ-ի ***«Որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայրի ձևավորում»*** նպատակի ***խնդիր 10.1-ով*** սահմանված է. ***«Ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմ»:***

Խնդիր 10.1-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Կազմել Ակադեմիայում որակի մշակույթի տարածմանը նպաստող միջնաժամկետ ու տարեկան գործողությունների ծրագրեր և ներդնել դրանց մշտադիտարկման մեխանիզմ»:***

Այս գործողության իրականացման ուղղությամբ Ակադեմիայում տարվում են համապատասխան աշխատանքներ:

Վերոգրյալ ***խնդրի 2-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Որակի ներքին ապահովման գործիքակազմում ներառել ընթացիկ գնահատում իրականացնող մեխանիզմ:***

Ակադեմիայում վերանայվել, լրամշակվել և գիտական խորհրդի 2022 թ. ապրիլի 15-ի նիստի թիվ 2 որոշմամբ հաստատվել է «Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության իրականացման և մշտադիտարկման ընթացակարգ»-ը:

2021 թ. հուլիսի 7-ի նիստի թիվ 4 որոշմամբ հաստատվել է «Ակադեմիայի ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգ»-ը, վերանայվել, լրամշակվել և գիտական խորհրդի 2022 թ. հունիսի 20-ի նիստի թիվ 3 որոշմամբ հաստատվել է «Ակադեմիայի

բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգը:

3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ներդնել որակի ապահովման ներքին գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ»:***

Հիշյալ գործողության իրագործման ուղղությամբ մշակվել և գիտական խորհրդի 2022 թ. ապրիլի 15-ի նիստի թիվ 4 որոշմամբ հաստատվել է «Ակադեմիայի որակի ներքին պահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը:

Այս ***խնդրի 4-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Վերամշակել և արդիականացնել Ակադեմիայի որակի կառավարման համակարգի հիմնական փաստաթղթերը»:***

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները որակի ապահովման և հավատարմագրման ուղղությամբ, ապահովելով դասընթացների ու կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի մեխանիզմները, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումները:

2021 թ. հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 5 որոշմամբ հաստատվել է «Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն»-ը:

Խնդիր 10.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Հստակեցնել Ակադեմիայի որակի կառավարման համակարգի կառուց-***

վածքը և յուրաքանչյուր պատասխանատու անձի լիազորություններն ու պարտականությունները»:

Լրամշակվել և 2021 թ. հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 5 որոշմամբ հաստատվել է «Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն»-ը, որտեղ հստակեցված է Կենտրոնի կառուցվածքն ու կառավարումը, ինչպես նաև Կենտրոնի յուրաքանչյուր պատասխանատու անձի լիազորություններն ու պարտականությունները:

Լրամշակման փուլում է «Ակադեմիայի որակի ներքին ապահովման հայեցակարգ»-ը, որտեղ կհստակեցվի որակի կառավարման համակարգի կառուցվածքային սխեման:

Վերոհիշյալ ***խնդրի 6-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Բարձրացնել Ակադեմիայի որակի հարցերով զբաղվող պատասխանատու անձանց որակավորումը»:***

Այս ուղղությամբ վերապատրաստում է անցել որակի կենտրոնի պետը և մեկ դասախոս:

Խնդիր 10.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել Ակադեմիայի որակի կառավարման համակարգի գործընթացները»:***

Խնդիր 10.1-ի 7-րդ գործողության ուղղությամբ կատարվող աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

Հիշյալ ***խնդրի 8-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել որակի մշտադիտարկման և դրա արդյունքների վերլուծության գործընթացները»:***

Կրթության որակի շարունակական բարելավմանը մեծապես նպաստում են դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները, ինչպես նաև Ակադեմիայում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները, որոնք իրականացվում են ըստ համապատասխան կանոնակարգերի:

2021-2022 ուսումնական տարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման շուրջ 800: Հարցումների արդյունքում միջին միավորը կազմել է 4,52: Ակադեմիայում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2021-2022 ուսումնական տարում մասնակցել է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման 225 շրջանավարտ: Հարցումների արդյունքները կիրառվել են ուսուցման և ուսումնառության գործընթացների կազմակերպման որակի բարելավման նպատակով:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստման արդյունավետությանը նպաստում է նաև արտաքին շահակիցների մասնավորապես գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: Իր գործունեության ընթացքում Ակադեմիան տվել է 2215 շրջանավարտ, որոնց մեծ մասը հաջողությամբ աշխատում են ԱԻՆ տարբեր ստորաբաժանումներում՝ շուրջ 400, 36-ը՝ Ակադեմիայում, մի մասը պետական ու հանրային կառույցներում, բանկային համակարգում և այլն:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են Ակադեմիայի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով: 2021-2022 ուսումնական տարվա հարցումների արդյունքների համաձայն բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.53-ից:

Ակադեմիայում կայուն ներդրված է որակի ներքին ապահովման համակարգը, որի գործընթացների շրջանակներում իրականացվել են որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթերի համալրում, վերանայում և ներդրում, խորհրդատվական աշխատանքներ, ներքին և արտաքին շահակիցների շրջանում անց են կացվել հարցումներ, կատարվել արդյունքների վերլուծություն: Հաշվետու ուսումնական տարին առանձնահատուկ էր նրանով, որ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվեց որակի ապահովման ներքին համակարգի և կրթական ծրագրերի մշտադիտարկում:

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ 2021-2022 ուսումնական տարում Ակադեմիայի իրականացրած կրթական գործունեությունը եղել է արդյունավետ, առկա են որոշակի ձեռքբերումներ, և հաջողությամբ իրականացվել են նախատեսված շատ գործընթացներ:

Խնդիր 10.2-ով սահմանված է. ***«Ներդնել Ակադեմիայի որակի ներքին և արտաքին ապահովման գնահատման արդյունավետ մեխանիզմներ»:***

Խնդիր 10.2-ի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Սահ-***

մանված ժամկետներում կատարել ինքնավերլուծություն ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով»:

10.2 խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված փաստաթղթի սահմանված ժամկետներում մշակման ուղղությամբ Ակադեմիան մշտապես իրականացնում է համապատասխան գործառույթներ և ապահովում է մարդկային ու ֆինանսական ռեսուրսներով:

Վերոհիշյալ ***խնդրի 2-րդ*** գործողությամբ նախատեսված է. ***«Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից արձանագրված թերությունների վերացման աշխատանքային պլան - ժամանակացույցի կազմում»:***

2020 թվականին սահմանված ժամկետում կազմվել է 2019 թվականի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից արձանագրված թերությունների վերացման աշխատանքային պլան – ժամանակացույցը և ընթանում են աշխատանքներ այդ փաստաթղթին համապատասխան:

Խնդիր 10.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ակադեմիայում իրականացվող առնվազն բակալավրի և մագիստրոսի 2-ական կրթական ծրագրեր ներկայացնել ծրագրային հավատարմագրման»:***

Այս գործողության ուղղությամբ նույնպես տարվում են աշխատանքներ:

ՆՊԱՏԱԿ XI. ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Ակադեմիայում մեծ աշխատանք է տարվում ուսանողների դաստիարակչական, հայրենասիրական գիտակցության, ինչպես նաև անվտանգության մշակույթի ձևավորման ուղղությամբ:

Անհրաժեշտ է ակադեմիայում ստեղծել դաստիարակության արդյունավետ համակարգ ֆիզիկական պատրաստության, ռազմահայրենասիրական, ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքների ու հմտությունների, ինչպես նաև անվտանգության մշակույթի ձևավորման ուղղություններով:

«Ակադեմիայում դաստիարակության արդյունավետ համակարգի ստեղծում» ռազմավարական նպատակի ***խնդիր 11.1-ով*** սահմանված է. ***«Ուսանողներին դաստիարակել հայրենիքի նկատմամբ հավատարմության ոգով, ինչպես նաև տոգորել ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների, ՀՀ ԱԻՆ և Ակադեմիայի նորմատիվ իրավական ակտերի պահպանման պատրաստակամությամբ»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Զարգացնել հայրենասիրության, պարտքի, պատվի, խղճի, պատասխանատվության համամարդկային ավանդական արժեքներ»:***

Այս նպատակով ուսանողների հետ կուրսղեկների կողմից մշտապես տարվում են աշխատանքներ դաստիարակության արդյու-

նավետ համակարգի ստեղծման ուղղությամբ: Ուսանողական խորհրդի կողմից կազմավորվել է սպորտակումբ, որի նպատակն է ֆիզիկական դաստիարակության դասախոսների հետ համատեղ զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակությանը, տեսական և գործնական դասընթացների միջոցով զարգացնել ուսանողների ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքներն ու հմտությունները:

Ուսանողական խորհրդի կողմից անցկացված առաջնության շրջանակներում իրականացվել են ինտելեկտուալ, մարզական (ֆուտբոլ, շախմատ, բազկամարտ) և մշակութային խաղ-մրցույթներ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» և այլն:

Հաշվետու ուսումնական տարում մշակութային մի շարք ծրագրեր է իրականացրել Ակադեմիայի մշակույթի կենտրոնը: Կենտրոնի «911» մանկական թատերախումբը «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի գրասենյակում ներկայացրել է «Աղետիկը» երաժշտական բեմականացումը՝ հիմնադրամի շահառու ընտանիքների երեխաների համար: Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 դպրոցի աշակերտներին մանկական թատերախումբը ներկայացրել է «Աղետիկը» երաժշտական բեմադրությունը: 1-4 դասարանների 100-ից ավելի երեխա ծանոթացել են երկրաշարժի, հրդեհի դեպքում և այլ արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոններին: Երաժշտական բեմադրության նպատակն է՝ նպաստել անվտանգության մշակույթի ձևավորմանը «Կրթություն խաղի միջոցով» ձևաչափով:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ձևավորել ծառայողական խնդիրներն արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում արդյունավետ կերպով լուծելու ունակ ակտիվ քաղաքացի»:***

Հիշյալի ուղղությամբ Ակադեմիան տարիներ շարունակ համատեղ պայմանագրի շրջանակում համագործակցում է ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ և ուսանողների համար հանրապետության տարբեր մարզերում կազմակերպում տարատեսակ միջոցառումներ, արշավներ, ճամբարներ, քայլարշավներ, բնապահպանական սեմինարներ: Նմանատիպ միջոցառումների ընթացքում նրանք սովորում են արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում հմտություններ՝ ինչպե՞ս չվնասել շրջակա միջավայրը, ինչպե՞ս ապրել անտառում և վրանային պայմաններում, ծայրահեղ իրավիճակներում ապահովել ինքնակազմակերպման բնառեսուրսային պայմանները, հոգալ իր ու դիմացինի անվտանգության մասին, դիմակայել վտանգներին, կայացնել արդյունավետ որոշումներ և այլն:

2021 թվականի հուլիսի 13-16-ը 10 ուսանող մասնակցել է Ապարանի ջրամբարի մոտ ծավալված սպորտային վրանային ճամբարին: Այդ օրերին ուսանողները մասնակցել են նաև դեպի Աստվածընկալ եկեղեցի քայլարշավին և կարողացել են կիրառել իրենց առաջին օգնության և պարանային գիտելիքները:

Հիշյալ համագործակցության շրջանակում նույն տարվա հուլիսի 24-30-ը Լոռու մարզի Գարգառ գյուղի տարածքում անց-

կացվեցին հանրապետական վարժանք-մրցումներ՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած Մուշեղ Դանիելյանին: Ակադեմիայից շուրջ 40 մասնակից ճամբարականները կազմակերպեցին քայլարշավ դեպի Գարգառի Սուրբ Հովհաննես եկեղեցի, մասնակցեցին մի շարք դասընթացների՝ տեղանքում կողմնորոշում, ուսապարկի ճիշտ դասավորում, գետնանց, արհեստական ճահճի ու թեք լանջի հաղթահարում, վրանի տեղադրում և այլ թեմաներով:

Ակադեմիայի Ստեփանավան քաղաքում միջին մասնագիտական կրթական ծրագրի մասնաշենքում բացվեց արցախյան 44-օրյա պատերազմում զոհված 6 ուսանողի նվիրված հուշանկյուն: Ցուցադրվեց Ժորա Առաքելյանի, Նարեկ Ասրյանի, Գևորգ Մուրադյանի, Հրաչյա Արզումանյանի, Գոռ Ղարաջյանի ու Վանիկ Խաչատրյանի մասին պատմող տեսաշար: Միջոցառմանը մասնակցում էին դասախոսներ, ուսանողներ և Ստեփանավանի քաղաքապետարանի ու մշակույթի տան աշխատողներ:

Խնդիր 11.2-ով սահմանված է. «***Ուսանողների մոտ դաստիարակել կարգապահություն և կատարողականություն, ձևավորել արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցների գործունեության նկատմամբ մասնագիտական նշանակության գիտակցում»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Ուսանողների շրջանում տանել նպատակային և համակարգված աշխատանք Ազգային բանակում ծառայության, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում բնակչության, նյութական ու մշակութային արժեքների պաշտպանության ուղղությամբ»:*** Այս ուղղությամբ Ակադեմիայի բոլոր կրթական ծրագրերում ներառված

են մի շարք դասընթացներ, որոնք ուսումնասիրում են, հատկապես «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր:

Վերոգրյալի արդյունքում էլ շրջանավարտների մոտ ձևավորվում է վերաբերմունք նյութական և մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ:

Ստեփանավանի «Լոռէ» փրկարարական ջոկատի տարածքում անցկացվել են ժայռամագլցման, ֆուտբոլի և վոլեյբոլի մրցումներ Ակադեմիայի ակադեմիական խմբերի միջև:

Ժայռամագլցման մրցմանն ամեն կուրսից ընդգրկվել էր երկուական աղջիկ ու տղա և հաղթողի գավաթը շնորհվել է անհատական արդյունքների հիման վրա: Ժայռամագլցման երթուղին բավական բարդեցված էր (փոխված էր քարերի դասավորությունը), սակայն դա չէր խանգարել մագլցողներին հրաշալի արդյունք ցույց տալու, քանի որ նրանց մեծ մասը մասնակցում է վրանային ճամբարների, արշավների, լեռնային արշավների և սովորում են ժայռամագլցման ու փրկարարական հմտություններ: Ժայռամագլցման շնորհիվ ուսանողները սովորում են ճիշտ կողմնորոշվել, ցանկացած իրավիճակում զգույշ գործել, առաջնորդվելով «ինքդ քեզ չվնասես կարգախոսով»:

Մրցումները նվիրված էին Ակադեմիայում սովորող Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված 15 ուսանողներին:

Արցախա-ադրբեջանական սահմանին թեժ մարտերի ավարտից հետո, Ազգային բանակից վերադարձած ուսանողների համար Ակադեմիայի հոգեբանության և աղետների հոգեբանության դասախոսները սկսել են ուսանողների հոգեբանական աջակցության դասընթացներ բոլոր կուրսերում, ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ արտաժամյա:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Խաղաղ և ռազմական դրության պայմաններում հրշեջ-փրկարարների հերոսության օրինակների պրոպագանդում՝ որպես մասնագիտական բարոյականության իդեալ»:***

Այս գործողության շրջանակում Ակադեմիայի կայքէջում և ֆեյսբուքյան էջում առկա են մեծ թվով նյութեր հրշեջ-փրկարարների հերոսության օրինակներով:

Խնդիր 11.3 - ով սահմանված է. «***Անձնային և մասնագիտական որակների դաստիարակություն, ուսանողների անձի ձևավորում, նրանց մշակութային մակարդակի բարձրացում»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Ձևավորել ինքնակատարելագործման սովորույթներ մասնագիտական բնագավառում, ցուցաբերել գիտական-ստեղծագործական մոտեցում հանձնարարված գործի նկատմամբ:***

Ամեն տարի հոկտեմբերի 13-ին, աղետների ռիսկի նվազեցման միջազգային օրվա առիթով Ակադեմիայում անցկացվում է ուսանողական վարժանք բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման «Փրկարարական գործ» և «Հրդեհային պաշտպանություն» մասնագիտությունների երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների

մասնակցությամբ: Վարժանքի ընթացքի անվտանգությունն ապահովվում է դասախոսների կողմից:

Հիշյալ վարժանքի սցենարի համաձայն, Երևանում տեղի է ունեցել երկրաշարժ և վնասվել Ակադեմիայի շենքը: Շենքում մնացած ուսանողներին, պրոֆեսորադասախոսական կազմին և աշխատակիցներին անվտանգ տարածք տեղափոխելուց և ներկայության ստուգումից հետո պարզվել է, որ բացակայում է հինգ ուսանող: Անօդաչու թռչող սարքով, ձայնառուսիչով և ռոբոտով հետախուզության արդյունքում շենքի երրորդ հարկում նրանց կողմից հայտաբերվում է երեք, իսկ նկուղում՝ երկու ուսանող: Պարանների և փրկարարական սարքերի միջոցով տուժածները տարհանվում են: Կատարվող աշխատանքներին զուգահեռ, ահազանգ է ստացվում, որ հրդեհ է բռնկվել Ակադեմիայի շենքի հարևան շենքում: Հրդեհը մարվում է: Բոլոր աշխատանքներն իրականացրել են ուսանողները:

Ուսումնավարժանքի նպատակն էր ԱՌՆ հանրային իրազեկման ու բնակչության ուսուցման խնդիրը, իսկ ուսանողների համար՝ տեսական գիտելիքները գործնական վարժությամբ ամրապնդումը:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Պատրաստել կոմպետենտ, գրագետ, պատասխանատու մասնագետներ, որոնք արդյունավետ կկատարեն մասնագիտական պարտականությունները»:***

Շրջանավարտների մոտ անձնային և մասնագիտական որակների կատարելագործման ձևավորվածության բարձր մակարդակ, մասնագիտական պարտականությունները գիտակցող գրագետ, կոմպետենտ շրջանավարտ պատրաստելու համար Ակադեմիայում

մեծ ուշադրություն է դարձվում ոչ միայն տեսական ուսուցման վրա, այլև գործնական աշխատանքների ու ուսումնավարժանքների միջոցով ձեռք բերվող հմտությունների ու կարողությունների վրա: Ուսումնավարժանքների ու գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները ցուցաբերում են նաև ստեղծագործական մոտեցում:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Բարձրացնել ուսանողների անվտանգության, իրավական, բնապահպանական և առողջ ապրելակերպի մշակույթի մակարդակը»:***

Օզոնի շերտի պահպանության միջազգային օրվա կապակցությամբ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին Ակադեմիայի «Ճգնաժամային կառավարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները էկոլոգիայի և բնապահպանության դասախոսի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աշխատակցի ուղեկցությամբ այցելել են Ամբերդի օդերևութաբանական կայան, որտեղ նրանք ծանոթացել են օզոնային վահանի առկա սպառնալիքներին: Այնուհետև մասնակցել են «Օզոնի շերտի պահպանության անհրաժեշտության, ուլտրամանուշակագույն ճառագայթների, մոլորակի կենդանի օրգանիզմերի վրա ունեցած ինչպես դրական, այնպես էլ բացասական դերի մասին» զեկույցին: Կայանի մասնագետներն ուսանողներին ծանոթացրել են նաև օզոնի խտությունը չափող սարքին՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր ուսանողին կատարել չափումներ (տեղին է նշել, որ սարքն Անդրկովկասում միակն է):

Այնուհետև ուսանողներն Ամբերդի օդերևութաբանական կայանի փորձահրապարակում ծանոթացել են եղանակային պայմանների տարբեր գործոններ (առավելագույն և նվազագույն օդի ջերմաս-

տիճաններ, հողի ջերմաստիճան, մթնոլորտային խոնավություն, քամու արագություն, ուղղություն և այլն) արձանագրող սարքավորումների, որոնց միջոցով օրական մի քանի անգամ տվյալներ են գրանցվում և փոխանցվում կենտրոնական գրասենյակ: Գործնական պարապմունքները, հատկապես գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ, շատ կարևոր են նյութի հիմնովին յուրացման, հիմնախնդիրների ընկալման համար, ինչը գիտական տեղեկատվության և ուսումնառության գործընթացի համագործակցության լավագույն ձև է: Ուսանողների մասնագիտական տեսական գիտելիքի ամրապնդման համար Ակադեմիայի կողմից կարևորվում են ուսումնական նման այցերը մասնագիտական հաստատություններ:

Խնդրի վերոգրյալ գործողությամբ նախատեսված Ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրի երկրորդ և երրորդ կուրսի տարբեր մասնագիտությունների գծով երեք ուսանող մասնակցել է Ռուսաստանի դաշնության Թաթարստանի Հանրապետության Տետյուշի քաղաքի քաղաքացիական պաշտպանության պետական քոլեջի նախաձեռնությամբ դեկտեմբերի 7-ին անցկացված «Տեխնիկական անվտանգություն և բնապահպանական կառավարում» թեմայով տարածաշրջանային առցանց օլիմպիադային: Օլիմպիադային մասնակցում էր 6 թիմ, յուրաքանչյուրը 3-ական անդամով: Առցանց օլիմպիադայի ժամանակ մասնակիցները պատասխանել են թեստային տեսական 35 հարցի. ի՞նչ է երկրաշարժը, որո՞նք են սննդային թունավորման ընդհանուր նախանշանները, քիմիական զենքի տեսակները, ի՞նչ պետք է անել ջրհեղեղի ժամա-

նակ, նախքան փրկարարների ժամանելը, խարույկների տեսակները և այլն:

Ակադեմիայի ուսանողները 80 տոկոսանոց արդյունքով զբաղեցրել են երրորդ տեղը, ինչն ակադեմիայի ուսանողների առաջին մասնակցությունն էր նման օլիմպիադայի, ուստի նման արդյունքը գոհացուցիչ էր:

Խնդիր 11.4-ով սահմանվում է. «***Ակադեմիայի պատմական, մշակութային, մարզական և գիտական ավանդույթների պահպանում և ընդլայնում»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. ***«Մասսայականացնել Ակադեմիայի պատմական, մշակութային, գիտական և մարզական նվաճումները»:***

«Քաղաքացիական պաշտպանության» միջազգային օրվան նվիրված Ակադեմիայում 2022թ. մարտի մեկին անցկացվեց «Քաղաքացիական պաշտպանության արդի մարտահրավերները» խորագրով հանրապետական երիտասարդական գիտաժողով, որին մասնակցեցին Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը, «Մխիթար Գոշ» հայռուսական միջազգային համալսարանը և այլն: Ընդհանուր թվով 13 զեկույց:

Նույն գործողության շրջանակներում Ակադեմիայի» և «Մանկապատանեկան հանրապետական կենտրոնի» համագործակցության արդյունքում 9 ուսանող մասնակցեց քայլարշավի՝ Երևան-

Գառնու տաճար-Ազատի կիրճ-Քարերի սիմֆոնիա-Երևան երթուղով: Նման արշավների ժամանակ ուսանողները կիրառում են Ակադեմիայում ստացած գիտելիքներն ու անհրաժեշտության դեպքում՝ դրանցով կիսվում այլ արշավականների հետ:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելեց Ակադեմիայի ինչպես պրոֆեսորադասախոսական կազմը, այնպես էլ ուսանողները, իսկ ապրիլի 26-ին խոնարհված «Ծաղկահավաքին» մասնակցեց շուրջ 30 ուսանող:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. ***«Ուսանողներին ներգրավել փարաբնույթ մարզական-առողջարարական միջոցառումներում»:***

Արտակարգ իրավիճակների նախարարության շարահրապարակում Գինեսի գրքի և Դյուցազնագրքի բազմակի ռեկորդակիր, մաս-ռեստլինգ և ուժային եռամարտ սպորտաձևերից միջազգային տարբեր մրցաշարերի մեդալակիր, «Սաքունց» աշխարհի ռեկորդների գրքի հիմնադիր, Ակադեմիայի շրջանավարտ-դասախոս Յուրի Սաքունցը սահմանեց ևս մեկ ռեկորդ՝ ատամներով 10 մետր տեղաշարժեց 37,5 տոննա ընդհանուր կշռով երկու հրշեջ-մեքենա, որը նրա 23-րդ ռեկորդն էր: Նրա նախորդ ռեկորդը՝ Երևանի մետրոպոլիտենի էլեկտրադեպոյի տարածքում տեղաշարժել էր 35 տոննա կշռող գնացքը (ճկույթ մատով 10 մետր): Մարզիկն իր ռեկորդը նվիրեց հայ զինվորին ու արցախյան երկու պատերազմներում զոհված ազատամարտիկներին և ներկաներին հորդորեց երբեք նրանց վաստակը չմոռանալ:

Յու. Սաքունցը Չարենցավան քաղաքում կազմակերպել էր մարզամշակութային միջոցառում՝ նվիրված արցախյան 44-օրյա պատերազմի հերոսներին:

Ըմբշամարտի պատանիների Հայաստանի առաջնությանը 80 կգ քաշային կարգում հաղթող է ճանաչվել միջին մասնագիտական կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Սևակ Բաղրամյանը, որից մեկ ամիս առաջ նա նաև Երևանի առաջնության գլխավոր մրցանակակիրն էր:

Ակադեմիայի մեկ այլ ուսանող՝ բակալավրի կրթական ծրագրի, առկա ուսուցման փրկարարական գործ մասնագիտության բռնցքամարտիկ Ջուլիետա Մարգարյանը Հայաստանի բռնցքամարտի առաջնության արծաթե մեդալակիր է:

Ակադեմիայում սովորող մարզական-առողջարարական միջոցառումներին մասնակցող ուսանողների թիվը մեծ է և այս թվարկումը կարելի է անվերջ շարունակել:

Ուսանողական խորհրդի աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներակադեմիական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ, մասնավորապես 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև գործող կրթական համակարգն ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու համար: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպա-

տակն ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն է:

Ուսանողական խորհրդի կողմից շարունակվել է հրատարակվել «Ճգնաժամ հաղթահարողները» թերթը:

Ուսանողական խորհուրդն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես 21 ուսանողի տրվել է ուսման վարձի զեղչ, իրականացվել ամառային հանգստի և ազատ ժամանցի ծրագրեր:

Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 200 ուսանող մասնակցել է ուսանողական խորհրդի կողմից կազմակերպած էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ անցկացվել են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնություններ:

Ուսանողներն այցելել են նաև ՀՀ ՊՆ «Եռաբլուր» զինվորական պանթեոն, հանդիպել ազատամարտիկների հարազատների հետ:

Մշակույթի կենտրոնի սաները «Թանգարանային գիշեր»-ի շրջանակներում այցելել են Երևանի թանգարաններ, մասնակցել են մի շարք համերգային ծրագրերի:

Ակադեմիայի բակալավր կրթական ծրագրի ուսանողներն այցելել են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան:

Թանգարանում ծանոթացել են Վանի թագավորության պատմության, մշակույթի, զարգացած տնտեսության բազմաթիվ նմուշների:

Ակադեմիայի բակալավրի և միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուսանողներն այցելել են Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր և Հայաստանի ազգագրության թանգարան:

Ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրի «Փրկարարական գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները կուրսղեկի ուղեկցությամբ այցելել են Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան:

Ակադեմիայի ուսանողները ճանաչողական այցով եղել են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի ռեկտորատի ու արհեստակցական կազմակերպության համար շարունակել է առաջնային մնալ աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը: Այդ նպատակով մի շարք աշխատանքներ են իրականացվել աշխատողների հանգստի, առողջության պահպանման և սոցիալական այլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործման ուղղությամբ: Արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից օգնության կարգով ութ աշխատողի հատկացվել է օգնություն:

2021-2022 ուսումնական տարում ՀՀ ԱԻՆ համակարգում աշխատողների Ակադեմիայում սովորող 7 երեխայի համար կիրառվել է ուսման վարձի 15 % զեղչ Ակադեմիայի ֆինանսական միջոցներից հատկացնելով 320 հազար ՀՀ դրամ:

Աշխատողների երեխաներին և թոռնիկներին (56 հոգու) ամանորյա միջոցառումներին մասնակից դարձնելու նպատակով արհես-

տակցական կազմակերպությունն իր ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպել է միջոցառումներ՝ ամանորյա ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության օրը, Ակադեմիայի մշակույթի կենտրոնի պարի խմբերը համերգներով հանդես են եկել Երևանի Խնկո-Ապոր գրադարանում:

Ակադեմիայի թվով 90 կին և աղջիկ աշխատողների համար ապրիլի 7-ի՝ մայրության ու գեղեցկության տոնի կապակցությամբ, Ակադեմիայի ֆինանսական միջոցներից յուրաքանչյուրի հաշվի համարին փոխանցվել է 15 հազար ՀՀ դրամ գումար, իսկ արհեստակցական կազմակերպության կողմից ստացել են նվերներ:

Աշխատակիցներն անմասն չեն մնացել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքից: Հաշվետու ժամանակահատվածում արհես-տակցական կազմակերպությունը ձեռք է բերել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացրել համերգային և թատերական տարբեր ներկայացումների շուրջ 100 տոմս:

Հաշվետու շրջանում Ակադեմիայի շուրջ 40 աշխատող, ընտանիքի անդամներ և երեխաներ հանգստացել են տարբեր հանգստյան տներում և մասնակցել են մեկօրյա էքսկուրսիաների:

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ, ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Ակադեմիայի հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի համաձայն շարունակվել է ներքին իրավական ակտերի մշակման և լրամշակման գործընթացը:

Մասնավորապես վերանայվել, մշակվել և Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

1. Ակադեմիայի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ:
2. Ակադեմիայի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգ:
3. Ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմը գրագողության կանխարգելման և պատասխանատվության ենթարկման կանոնակարգ:
4. Ակադեմիայի առկա ուսուցման վճարովի հիմունքով սովորողների ուսման վճարի փոխհատուցման կանոնակարգ:
5. Ակադեմիայի միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման (մոդուլային ուսումնական ծրագրով դասավանդողների համար) ուղեցույց:

6. Շահակիցների կարիքների գնահատման կարգ:
7. Ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրի ընդունելության կարգ:
8. Ակադեմիայի դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների ընտրության իրականացման և մշտադիտարկման ընթացակարգ:
9. Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգ:
10. Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն:
11. Ուսումնական պլաններ:
12. Հիմնական դպրոցում խմբակի գործունեության «Ճգնաժամ հաղթահարողներ» չափորոշչի և ծրագրի նախագիծը (ներառում է հայեցակարգը, հիմնական գաղափարները, ծրագրերը և մոդուլները):

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. **Գասպարյան Ա., Ալավերդյան Գ.,** Քիմիական օբյեկտների հիմնական վտանգները և պաշտպանությունը: Ուսումնական ձեռնարկ:
2. **Նասիլյան Ա.,** Ուսանողների առողջ ապրելակերպի ձևավորումը ֆիզիկական դաստիարակության միջոցով: Ուսումնական ձեռնարկ:
3. **Սարաֆյան Կ.,** Փլուզումներ, մաս 2: Ուսումնական ձեռնարկ:
4. **Բաղալյան Մ.,** Մեկուսիչ և հարդարիչ շինարարական նյութերի արտադրության տեխնոլոգիաները: Մենագրություն:
5. **Պետրոսյան Հ.,** Ուսուցման ռազմավարություններ: Ուսումնական ձեռնարկ:
6. **Էլմասակյան Ա.,** Ջրասուզական պատրաստություն: ՈՒսումնական ձեռնարկ:
7. **Գասպարյան Ա., Գսպոյան Գ.,** ՔՊ մարտավարություն: Ուսումնական ձեռնարկ:
8. **Գաբրիելյան Վ., Գասպարյան Ա.,** ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը ԲՊ տեսանկյունից: Ուսումնական ձեռնարկ:

9. **Մաթևոսյան Հ, Ավետիսյան Ք, Փոթիկյան Մ.,** Ապարատածրագրային համակարգերը հեռակառավարվող սարքերում: Ուսումնական ձեռնարկ:
10. **Հովհաննիսյան Ս., Պապիկյան Կ., Ղարիբյան Հ., Հովակիմյան Տ.,** Ճգնաժամ հաղթահարողներ, ՈՒսուցչի ձեռնարկ 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների համար:
11. **Գասպարյան Ա., Ղարիբյան Հ.,** Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները և դրանց շահագործումը, Ուսումնական ձեռնարկ:
12. **Գասպարյան Ա., Ղարիբյան Հ.,** Կոլեկտիվ պաշտպանական կառույցներ, դրանց շահագործումն ու սպասարկումը: Ուսումնական ձեռնարկ:
13. **Գասպարյան Ա., Ղարիբյան Հ.,** Քաղաքացիական պաշտպանության մարտավարության առանձնահատկություն-ները: Ուսումնական ձեռնարկ:

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
(այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների)
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՀՈՒՇԱԳՐԵՐԸ

1. ***28.12.2021թ. Համագործակցության հուշագիր***՝ R5 արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն:
2. ***29.12.2021 Համագործակցության հուշագիր***՝ Լայթ-լայն ընկերություն:
3. ***10.01.2012 Պայմանագիր***՝ Լոռէ փրկարարական ջոկատ:
4. ***25.01.2022 Համագործակցության հուշագիր***՝ Ստեփանավանի Ավիացիայի և ինովացիոն տեխնոլոգիաների կրթական կենտրոն:
5. ***01.02.2022 Համագործակցության հուշագիր***՝ ՀՀ ԿԳՄՍՆ Մանկապատանեկան հանրապետական կենտրոն:
6. ***01.06.2022 Համագործակցության հուշագիր***՝ Կազանի Ա.Տուպոլևի անվան ազգային հետազոտական տեխնիկական համալսարան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ն Ա Խ Ա Բ Ա Ն	3
	ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	6
ՆՊԱՏԱԿ I.	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ	7
ՆՊԱՏԱԿ II.	ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	13
ՆՊԱՏԱԿ III.	ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	24
ՆՊԱՏԱԿ IV.	ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	41
ՆՊԱՏԱԿ V.	ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	46
ՆՊԱՏԱԿ VI.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	51
ՆՊԱՏԱԿ VII.	ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	60
ՆՊԱՏԱԿ VIII.	ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	69
ՆՊԱՏԱԿ IX.	ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	80
ՆՊԱՏԱԿ X.	ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	86

ՆՊԱՏԱԿ XI. ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ..... 93

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ, ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 108

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ..... 110

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ԵՎ ՀՈՒՇԱԳՐԵՐԸ..... 112

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ